

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

**0303 «ՌՈՒՄԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ՌՈՒՄԱՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2010

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեսավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քննութ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն	Այդ թվում			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
						Ընդամենը	Տեսակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարամուլներ	3-րդ կիս. 17 շաբ	4-րդ կիս. 19 շաբ.	5-րդ կիս. 17 շաբ.	6-րդ կիս. 18 շաբ.	7-րդ կիս. 12 շաբ.	8-րդ կիս. 9 շաբ.
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3,4տ		72	18	54		36	36					
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		6տ		54	36	18					54			
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4տ		54	36	18		18	36					
1.4	Իրավունքի հիմունքներ		5տ		36	18	18				36				
1.5	Պատմություն		4տ		54	36	18		22	32					
1.7	Օտար լեզու		3,4,5,6,7,8տ		216	90	126		44	46	58	40	12	16	
1.8	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5,6,7,8		184	36	148		34	38	34	36	24	18	
	ԸՆԴԱՄԵՆԸ				670	270	400		154	188	128	130	36	34	
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		4տ		36	18	18			36					
2.2	Համակարգչային օպերատորության հիմունքներ		3		54	10	44		54						
2.3	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4տ		18	18				18					
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	46	62		54	54					
3.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
3.1	Հաղորդակցման հմտություններ		3տ		36	18	18		36						
3.2	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		4տ		54	24	30			54					
3.3	Անվտանգություն և առաջին օգնություն		4տ		36	20	16			36					
3.4	Համակարգչային օպերատորության հիմունքներ		3տ		54	10	44		54						
	ԸՆԴԱՄԵՆԸ				180	72	108		90	90					
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
4.1	Հոգեբանություն		3տ		72	54	18		72						

4.2	Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները		4տ		36	24	12			36				
4.3	Դաստիարակության գործընթաց		5տ		18	12	6				18			
4.4	Հատուկ մանկավարժություն		5տ		36	22	14				36			
4.5	Կրթության բովանդակություն		5տ		18	9	9				18			
4.6	Ուսուցման գործընթաց		5տ		36	24	12				36			
4.7	Դրդապատճառային տեխնիկայի կիրառում		5տ		18	12	6				18			
4.8	Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում		5տ		18	9	9				18			
4.9	Համագործակցային ուսումնառություն		5տ		18	9	9				18			
4.10	Ուսուցման արդյունքների ստուգում և գնահատում		6տ		18	10	8					18		
4.11	Դասի նախապատրաստում		6տ		18	12	6					18		
4.12	Լեզուն որպես լեզվաբանության ուսումնասիրության առարկա		6տ		18	12	6					18		
4.13	Լեզուն որպես լեզուներ ուսումնասիրող գիտությունների համակարգ		6տ		18	12	6					18		
4.14	Լեզվի համակարգը և կառուցվածքը		6		36	25	11					36		
4.15	Արտադասարանային և արտադպրոցական աշխատանք		6տ		18	8	10					18		
4.16	Կրթության օրենսդրությունը		7		18	12	6						18	
4.17	Ինքնակրթություն		7		18	9	9						18	
4.18	Մատենավարություն և փաստաթղթերի ստեղծում		7		18	12	6						18	
4.19	Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ		7տ		36	18	18						36	
4.20	Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ		8տ		108	64	44						66	42
	ԸՆԴԱՄԵՆԸ				594	369	225		72	36	180	108	156	42
5.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
5.1	Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա		7,8տ		62	22	40						36	26
5.2	Երկրագիտություն		6տ		72	48	24				26	46		
5.3	Ռուսերենի բառապաշար		3տ		72	26	46		72					
5.4	Ռուսաց լեզվի բառակազմության սկզբունքները		3տ		32	12	20		32					
5.5	Ռուսաց լեզվի հնչյունաբանության առանձնահատկությունները		3տ		36	10	26		36					
5.6	Ռուսաց լեզվի ուղղախոսության հիմունքները		4տ		18	6	12			18				
5.7	Ռուսաց լեզվի ուղղագրության սկզբունքները և կետադրական նշանները		4տ		26	8	18			26				
5.8	Ձևաբանություն. Գոյական անուն		4տ		36	12	24			36				

5.9	Ձևաբանություն. Ածական անուն		4տ		26	10	16			26				
5.10	Ձևաբանություն. Թվական անուն		5տ		20	6	14				20			
5.11	Ձևաբանություն. Դերանուն		5տ		22	6	16				22			
5.12	Ձևաբանություն. Բայ		5տ		40	14	26				40			
5.13	Ձևաբանություն. Դերբայ		5տ		22	8	14				22			
5.14	Ձևաբանություն. Մակբայական դերբայ		5տ		18	6	12				18			
5.15	Ձևաբանություն. Մակբայ		5տ		18	6	12				18			
5.16	Ձևաբանություն. Խոսքի սպասարկու մասեր և ձայնարկություն		6տ		36	10	26					36		
5.17	Բառակապակցություն		6տ		26	8	18					26		
5.18	Շարահյուսություն. Պարզ նախադասություն		6տ		50	16	34					50		
5.19	Շարահյուսություն. Պարզ բարդեցված նախադասություն		6տ		58	18	40					58		
5.20	Շարահյուսություն. Միակազմ նախադասություն		6տ		20	6	14					20		
5.21	Շարահյուսություն. Բարդ նախադասության տեսակները		7-8տ		72	18	54						36	36
5.22	Ուղղակի և անուղղակի խոսք		7տ		18	6	12						18	
5.23	Խոսքի կուլտուրա		8		36	12	24							36
5.24	Ռուս գրականություն. Ընթերցանություն. մակարդակ 1		3		102	32	70		102					
5.25	Ռուս գրականություն. Ընթերցանություն. մակարդակ 2		4		102	32	70			102				
5.26	Ռուս գրականություն. Ընթերցանություն. մակարդակ 3		5		102	14	88				102			
5.27	Ռուս գրականություն. Ընթերցանություն. մակարդակ 4		6		102	10	92					102		
5.28	Ռուս գրականություն. Ընթերցանություն. մակարդակ 5		8տ		102	30	72						78	24
5.29	Ռուս գրականություն. Բանահյուսություն		4տ		36	14	22			36				
5.30	Ռուս գրականություն. XI-XVIII դդ.		4տ		36	10	26			36				
5.31	Ռուս գրականություն. XIX դարի I կես		4,5տ		72	18	54			36	36			
5.32	Ռուս գրականություն. XIX դարի II կես		6տ		72	18	54					72		
5.33	Ռուս գրականություն. XX դարի I կես		7տ		72	34	38						72	
5.34	Ռուս գրականություն. XX դարի II կես և արդի գրականություն		8տ		54	14	40							54
		ԸՆԴԱՄԵՆԸ			1688	520	1168		242	316	304	410	240	176
6.	ԸՆՏՐՈՎԻ				48									48
		ԸՆԴԱՄԵՆԸ			48									48
	ՊԱՀՈՒՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				24									24
		ԸՆԴԱՄԵՆԸ			24									24
		ԸՆԴԱՄԵՆԸ			3312				612	684	612	648	432	324

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				300										
Շաբաթվա ժամերի քանակը									36	36	36	36	36	36

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱՊԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՉԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Ոճաբանություն				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
2	Էթիկա			1	հայոց լեզվի և խոսքի մշակույթի,
3				2	օտար լեզուների (ըստ լեզուների ընդգրկման),
4				3	համակարգչային,
				4	լինգվաֆոնային,
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	տեսակաբիմետ,
1	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցմամբ	IV,VI	5	6	ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների:
2	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	VII,VIII	12	7	
3	ՆախաՎարտական պրակտիկա	VIII	4	8	
	ԸՆԴԱՄԵՆԸ		21	9	
					ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
VI. ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ				1	համակարգչային,
1. Մանկավարժություն				2	տեսա- և լսամոնտաժման, բազմացման, պատճենման, տեսագրման:
2. Ռուսաց լեզու և գրականություն					ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐՉԵՍԱՆՈՑՆԵՐ
				1	
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Մարզադահլիճ
				2	Մարզահրապարակ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում

առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:
12. Պետական ամփոփիչ ատեստավորումը կարող է անցկացվել նաև դիպլոմային նախագծի կամ դիպլոմային աշխատանքի միջոցով:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱԳԳ-3-08-001
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 18 ժամ Գործնական աշխատանք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1. սահմանի ուսումնառության անձնական նպատակները. 2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին. 3. նախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ. 4. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ. 5. կատարի փաստաթղթավորում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար նակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:
Գնահատման միջոց	Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին
Կատարման չափանիշներ	ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք, բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,

	<p>գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային,</p> <p>դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:</p>
Գնահատման միջոց	<p>Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը),</p> <p>բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,</p> <p>գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,</p> <p>դ. կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում:</p>
Գնահատման միջոց	<p>Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները,</p> <p>գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:</p>
Գնահատման միջոց	<p>Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց</p>

	միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:	
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:	
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում`	2 ժամ
	Գործնական պարապմունքներ`	4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կատարել փաստաթղթավորում	
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը` ըստ դրանց նշանակության, բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:	
Գնահատման միջոց	Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր` պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում` ըստ տեսակների: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:	
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:	
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում`	6 ժամ
	Գործնական պարապմունքներ`	6 ժամ
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
Սողուլի դասիչը	ԱԱՕ – 3-08-001	
Սողուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողությունները:	
Սողուլի տևողությունը	36 ժամ	
	Տեսական ուսուցում`	20 ժամ
	Գործնական պարապմունք`	16 ժամ
Մուտքային պահանջները	Չկան	
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա. 1. սահմանել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները, 2. պահպանել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ռադիոէլեկտրոնային սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքներն իրականացնելիս, 3. իմանալ ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց	

	<p>պատճառները և պաշտպանվելու միջոցները, 4. կատարել առաջին օգնության կազմակերպումը և կիրառել անհրաժեշտ միջոցներ:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները, ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը, զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների դեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:</p>
Գնահատման միջոց	<p>Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, կարողանում է որոշակի եզրահանգումներ կատարել:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:</p>
Գնահատման միջոց	<p>Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:
Ուսուցման	Տեսական ուսուցում՝ 6 ժամ

երաշխավորված ժամաքանակ	Գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները, գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները, դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումը կատարվելու է թեսթի միջոցով, որը պարունակելու է աշխատանքների թվարկումը և հնարավոր վնասվածքները: Նա պետք է նշի, թե որ իրավիճակներում ինչ վնասվածքներ են առաջանում: Առանձին հարցերով պարզաբանվելու է յուրաքանչյուր իրավիճակում վնասվածքները կանխելու և դրանցից պաշտպանվելու քայլերը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե թեսթի առաջադրանքը կատարվում է առնվազն 60 տոկոսով:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական միջոցներ, ուսումնական գրականություն, տեսաֆիլմ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում 6 ժամ Գործնական աշխատանք 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը, բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը, գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ, դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները, ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:
Գնահատման միջոց	Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Դասախոսություն՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՍՊՊՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԸԱՀ 3 -08-001
Մոդուլի նպատակը	Սովորողին գիտելիքեր տալ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, դեկավարի և գործընկերների հետ արդյունավետ

	հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 24 ժամ Գործնական պարապմունքներ՝ 30 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Ուսումնառության արդյունքները՝	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների. 2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ. 3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում. 4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի դեկավարի հետ. 5. դրսևորի քննադատական մտածողություն. 6. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները, բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները, բ. ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ,

	գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևերումներ, դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևերումներ:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ հարցերի առնվազն 70 %-ին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 3 ժամ
Ոխումնառության արդյունք 3	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները, բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները, դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրսևերում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին, ե. ճիշտ վերաբերմունք է դրսևերում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ, զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի՝ ճիշտ է կառուցում միջանձնային հարաբերությունները, կարողանում է հանդես գալ թիմի անդամ՝ համագործակցելով մյուսների հետ, ճիշտ է կողմնորոշվում վիճահարույց հարցերում և դրանց տալիս է համապատասխան լուծումներ կամ պատասխաններ:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ոխումնառության արդյունք 4	Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը, բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև

	գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում պատշաճ հարաբերություն դրսևորելու կարողություն:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Դրսևորել քննադատական մտածողություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը, բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ, գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 3 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ»
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները, բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան), գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները, դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում, ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը, զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները, է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը, ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային

	պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	SS 3 - 08 – 001
Մոդուլի նպատակը	Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական աշխատանք՝ 44 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝ <ol style="list-style-type: none"> 1. կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը, 2. կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ, 3. կկարողանա պահպանել փաստաթուղթը, 4. կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ, 5. կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ, 6. կկարողանա տպագրել փաստաթուղթը: 7. կունենա ինտերնետում աշխատելու իմացություն
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ)
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը, բ. բացել նոր փաստաթուղթ, գ. ստեղծագրի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ, ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում, զ. փակել փաստաթուղթը, է. բացել առկա փաստաթուղթը, ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:
Գնահատման միջոց	<ol style="list-style-type: none"> 1. Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը: 2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն

	<p>նախօրոք առաջարկված տեղում:</p> <ol style="list-style-type: none"> 3. Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղծագործությունը Տեքստային Ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները: 4. Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը: <p>Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:</p>				
<p>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</p>	<p>Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ոխուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:</p>				
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</p>	<table border="0"> <tr> <td>Տեսական ուսուցում</td> <td>2 ժամ</td> </tr> <tr> <td>Գործնական աշխատանք</td> <td>4 ժամ</td> </tr> </table>	Տեսական ուսուցում	2 ժամ	Գործնական աշխատանք	4 ժամ
Տեսական ուսուցում	2 ժամ				
Գործնական աշխատանք	4 ժամ				
<p>Ոխուցման առարկայի արդյունք 2</p>	<p>Տեքստերի տարրական ֆորմատավորում</p>				
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, բ. նշել բառերը և տեքստային հատվածները, գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում, դ. կատարել տողերի հավասարեցում, ե. փոխել միջտողային տարածությունները, զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով, է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով, ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից, թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները, ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները, ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը, ժբ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ, ժգ. պատճենել տեքստը, ժդ. տեղափոխել տեքստը, ժե. տողադարձել տեքստը, ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:</p>				
<p>Գնահատման միջոց</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ: 2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ: 3. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղծագործությունը տեքստը նշելու հնարավորությունները: 4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգիչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները: 5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները: 6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված 				

	<p>պատրաստի փաստաթղթի օրինակի վրա: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում 4 ժամ Գործնական աշխատանք 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Փաստաթղթի պահպանում
Կատարման չափանիշներ	ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը, բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:
Գնահատման միջոց	<ol style="list-style-type: none"> 1. Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ: 2. Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը: 3. Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալների կատարելու դեպքում:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Գործնական աշխատանք 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել աղյուսակ, բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ, է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ, ը. փոխել աղյուսակի գծերի գույնը, թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:
Գնահատման միջոց	<ol style="list-style-type: none"> 1. Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի: 2. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա: <p>Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան բացթողումներ:</p>
Մեթոդաբանություն և	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում

ռեսուրսներ	է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում 2 ժամ Գործնական աշխատանք 8 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Գրաֆիկական խմբագրում և նկարագարողում
Կատարման չափանիշներ	ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրել կանոնավոր պատկերներ, դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով, ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները, զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, է. գծագրել տեքստային բլոկներ, ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները, թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները, ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:
Գնահատման միջոց	1.Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա: 2.Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Գործնական աշխատանք 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Փաստաթղթի տպագրում
Կատարման չափանիշներ	ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները, գ. տպագրել փաստաթուղթը:
Գնահատման միջոց	1.Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն: 2.Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անձշտություններ թույլ տալ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Գործնական պարապմունք 2 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Ինտերնետում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	<p>ա. իմանալ ինտերնետ հասկացության նշանակությունը,</p> <p>բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,</p> <p>գ. իմանալ ինտերնետային Հասցե հասկացությունը,</p> <p>դ. իմանալ History հրամանի նշանակությունը,</p> <p>ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,</p> <p>զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,</p> <p>է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,</p> <p>ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,</p> <p>ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,</p> <p>ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,</p> <p>ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակությունը,</p> <p>ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:</p>
Գնահատման միջոց	<ol style="list-style-type: none"> 1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը: 2. Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել: 3. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը: 4. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը: 5. Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից: 6. Ուսանողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները: 7. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը: <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական նակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում 2 ժամ Գործնական աշխատանք 12 ժամ

Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության
 «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Սողուլի դասիչը	ՌԼԴ 4-09-001
Սողուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Սողուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հոգեկանի զարգացման ընդհանուր օրինաչափությունների, գործընթացների, որակների և վիճակների մասին, ինչպես նաև ձևավորել դպրոցական տարիքի երեխաների հոգեկան ձևավորման և զարգացման գործընթացը ճիշտ ուղղորդելու կարողություններ:
Սողուլի տևողությունը	72 ժամ Տեսական ուսուցում 54 ժամ Գործնական աշխատանք 18 ժամ
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է. 1. իմանա հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, ֆունկցիաները և բնագավառները, 2. իմանա անձին և ճանաչի նրա գործունեության ձևերը, 3. իմանա աճի ճանաչողական /իմացական/ գործընթացները, 4. իմանա աճի գործունեության հուզականային ոլորտը և հոգեկան վիճակները, 5. իմանա աճի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները, 6. իմանա մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ:
Սուտքային պահանջները	Չկան
Սողուլի գնահատման կարգը	Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, գործառնությունները և բնագավառները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում հոգեբանությունը որպես գիտություն, նրա զարգացման հիմնական փուլերը, բ. ճիշտ է բացատրում հոգեբանության ուսումնասիրության մեթոդները անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության

	<p>ժամանակ, գ. ճիշտ է ներկայացնում հոգեբանության սկզբունքները, գործառույթները և հոգեկանի ռեֆլեկտոր բնույթը, դ. ճիշտ է բացատրում հոգեբանության բնագավառները և միջառարկայական կապերը:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված կամ եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով: Ուսանողը պետք է լիարժեք ներկայացնի հոգեբանության ուսումնասիրության մեթոդները, կիրառի դրանք երեխայի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու զրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք` 9 ժամ Գործնական աշխատանք` 3 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Իմանալ անձը և ճանաչել նրա գործունեության ձևերը</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում անձ, անհատ, անհատականություն և մարդ հասկացությունները և ճանաչում է անձը որպես օբյեկտ և սուբյեկտ, բ. ճիշտ է ներկայացնում անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում, գ. ճիշտ է ներկայացնում տարիքին բնորոշ գործունեության առաջատար ձևը (խաղ, աշխատանք, ուսումնառություն), դ. ճիշտ է ներկայացնում անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և բավարար ներկայացված են անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում, տարիքին բնորոշ գործունեության առաջատար ձևը, անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու զրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք` 9 ժամ Գործնական աշխատանք` 3 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Իմանալ անձի ճանաչողական (ինացական) գործընթացները</p>

<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում անձի ուշադրությունը, նրա տեսակները, հիմնական որակները, դպրոցականի ուշադրությունը, որպես ճանաչողախմայական գործընթաց, բ. ճիշտ է ներկայացնում զգայությունը, նրա առանձնահատկությունները, տեսակները, դպրոցականի զգայությունները, գ. ճիշտ է ներկայացնում ընկալումները, նրա տեսակները, առանձնահատկությունները և նրանց իմացական դերը, դ. ճիշտ է ներկայացնում հիշողությունը, նրա տեսակները, հիմնական գործընթացները և դպրոցականի հիշողությունը, որպես ճանաչողախմայական գործընթաց, ե. իմացական գործընթացներից ճիշտ է ներկայացնում երևակայությունը, նրա տեսակները, դպրոցական տարիքի երեխաների երևակայական զարգացումը, զ. ճիշտ է ներկայացնում խոսքը որպես հաղորդակցման միջոց, նրա տեսակները և ճիշտ է պատկերացնում թե ինչպես է հարկավոր զարգացնել դպրոցական տարիքի երեխաների խոսքը, է. ճիշտ է բացատրում մտածողությունը, նրա հիմնական գործընթացները և դպրոցականի մտածողությունը:</p>
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են անձի ուշադրությունը, ընկալումները, ուշադրությունը, զգայությունը, նրանց տեսակները, հիմնական որակները, կրտսեր դպրոցականի ճանաչողախմայական գործընթացը, նրա առանձնահատկությունները, տեսակները, կրտսեր դպրոցականի զգայությունները, խոսքը որպես հաղորդակցման միջոց:</p>
<p>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</p>	<p>Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</p>	<p>Տեսական պարապմունք` 9 ժամ Գործնական աշխատանք` 3 ժամ</p>
<p>Ոխումնառության արդյունք 4</p>	<p>Իմանալ անձի գործունեության հուզականային ոլորտը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում անձի հուզականային ոլորտը և նրա արտաքին դրսևորումները, բ. ճիշտ է բացատրում հույզերը և զգացումները, նրանց տեսակները, գ. ճիշտ է ներկայացնում կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական գործառույթները ճիշտ է ներկայացնում հոգեկան վիճակներից` սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալները:</p>
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են անձի հուզականային ոլորտը և նրանց արտաքին դրսևորումները, հույզերը և զգացումները, նրանց տեսակները, կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական ֆունկցիաները, հոգեկան վիճակներից սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական</p>

	<i>խաթարումների նախադրյալները:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք` 9 ժամ Գործնական աշխատանք` 3 ժամ</i>
Ուսումնառության արդյունք 5	<i>Իմանալ անձի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները</i>
Կատարման չափանիշներ	<p>ա. լսարանային աշխատանքի ժամանակ ճիշտ է կիրառում «Խճանկար» մեթոդը, բ. լսարանային աշխատանքի ժամանակ ճիշտ է կիրառում «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը, գ. լսարանային աշխատանքի ժամանակ ճիշտ է կիրառում «Խմբային հետազոտության» մեթոդը:</p>
Գնահատման միջոց	<p>1. Սովորողները պետք է աղյուսակ լրացնեն: 2. Սույնակով ներկայացվում և քննարկվում են դասավանդման և ուսումնառության ռազմավարությունները և գնահատվում ռուբրիկի հիման վրա`</p> <ul style="list-style-type: none"> • գերազանց` բոլոր ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները դուրս են բերված, հստակ մեկնաբանված են, • լավ` բոլոր ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները դուրս են բերված, սակայն մեկնաբանությունը հստակ չէ, • բավարար` ոչ բոլոր ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն են դուրս բերված, մեկնաբանությունը հստակ չէ, • անբավարար` դուրս են բերված սահմանափակ քանակով հատկանիշ: <p>Կիրառելով «Խճանկար» մեթոդը կազմակերպել աշխատանք այլ իմտերակտիվ մեթոդների նյութի հիման վրա: Դասախոսը թեմայի ամփոփման համար տարբեր հարցեր, հանձնարարություններ կարող է տալ, որոնց նպատակն է պարզել նյութի յուրացման մակարդակը:</p>

Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Այս նյութի յուրացման համար կարևոր է բազմազան համագործակցային մեթոդների կիրառումը, որոնք ուղղված են նյութի խորքային ընկալմանը և կարողությունների զարգացմանը: Դասավանդող-սովորող համագործակցությունը նպաստում է ուսումնական խնդիրների ազատ և արդյունավետ քննարկմանը և համատեղ որոշումների կայացմանը: Դերային խաղերը, խմբային քննարկումները, իմիտացիոն խաղերը, իրավիճակի մոդելավորումը և այլ մեթոդներ կնպաստեն ուսանողակենտրոն ուսուցման իրականացմանը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 3 ժամ:
ՍՊՈՒՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ»	
Սողուլի դասիչը	ՈԼԴ 4-09-010
Սողուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է ռուսաց լեզվի ուսուցիչ որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Սողուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակության, գնահատման հիմնական նպատակների, խնդիրների և գործառույթների, սովորողների ուսումնական գործունեության ընթացիկ գնահատումը կարգավորող սկզբունքների, մոտեցումների, հնարների, գնահատման ձևերի ու ստուգման տեսակների, կիսամյակային ամփոփիչ և տարեկան վերջնական ամփոփիչ գնահատականների ձևավորման, ուսումնառության արդյունքների սանդղակավորման, ինչպես նաև ձևավորել ընթացիկ՝ ուսուցանող, պարտադիր գրանցման միավորային, ամփոփիչ գնահատման և կիսամյակային ու տարեկան գնահատականներ ձևավորելու կարողություններ:
Սողուլի տևողությունը	18 ժամ Տեսական պարապմունք՝ 10 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ:
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001 «Հոգեբանություն», ՈԼԴ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈԼԴ 4-09-006 «Ուսուցման գործընթաց» մոդուլները:
Ուսումնառության արդյունքներ	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. իմանա ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակությունը, 2. իմանա գնահատման սկզբունքները, տեսակները, գործառույթները, 3. կատարի ընթացիկ՝ ուսուցանող, պարտադիր գրանցման միավորային, ամփոփիչ գնահատման և կիսամյակային ու տարեկան գնահատականներ, 4. կիրառի գնահատման մեթոդաբանությունը, 5. Կիրառի գնահատման արդյունքների սանդղակավորում:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում վերահսկողության տեսակները, բովանդակությունը, մեթոդները և մանկավարժական պահանջները, բ. ճիշտ է ձևակերպում չափում, գնահատում և արժևորում հասկացությունները, գ. ճիշտ է ներկայացնում լեզվի գնահատման առանձնահատկությունները՝ ըստ խոսքային գործունեության տեսակների:
Գնահատման միջոց	Գրավոր ներկայացնել թեստավորման, չափման, գնահատման և արժևորման ընթացակարգերը և նշել դրանց տարբերությունները: Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետի անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Մոդուլի ուսուցման ընթացքում դասավանդողից մեծ ջանքեր կպահանջվի՝ կիրառելով ուսումնառության և գնահատման ժամանակակից փոխազդու մեթոդներ, որտեղ գլխավոր խնդիրը ունկնդրի ուսումնառությունն է: Բացի առկա գրականությունից, դասավանդողները նպատակաուղղված կլինեն մոդուլի մեջ ընդգրկել նաև նոր նյութեր, ռեսուրսներ, որոնք կհարստացնեն և կլրացնեն մոդուլը: Մոդուլի ուսումնառության ընթացքում սովորողները ակտիվորեն ներգրավված են լինելու որևէ ծրագրի, նախագծի, դասընթացի կամ այլ միջոցառման փոքրամասշտաբ գնահատման աշխատանքներում: Նրանցից պահանջվելու է ակտիվորեն մասնակցել ներլսարանային քննարկումներին և սեփական փորձը փոխանակել համակուրսեցիների հետ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ գնահատման սկզբունքները, տեսակները, գործառույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գնահատման բոլոր սկզբունքները, բ. ճիշտ է բացատրում հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատում տեսակները, գ. ճիշտ է բացատրում գնահատման գործառույթները:
Գնահատման միջոց	Բազմակի ընտրությամբ հարցաշար, որտեղ կպահանջվի տրված ուսումնառության նպատակներին համապատասխանեցնել գնահատման միջոցները: Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Մոդուլի ուսուցման ընթացքում դասավանդողից մեծ ջանքեր կպահանջվեն՝ կիրառելու ուսումնառության և գնահատման ժամանակակից փոխազդու մեթոդներ, որտեղ գլխավոր խնդիրը հանդիսանում է ունկնդրի ուսումնառությունը: Բացի առկա գրականությունից, դասավանդողները նպատակաուղղված կլինեն մոդուլի մեջ ընդգրկելու նաև նոր նյութեր, ռեսուրսներ, որոնք կհարստացնեն և կլրացնեն մոդուլը: Մոդուլի թեմաները դասավանդելու համար առաջարկվող մեթոդներ կարող են լինել մտքերի տարափր, ԽԻԿ, փոքր խմբերով աշխատանքը, դերային խաղը, բաց բանավեճը, դեպքի ուսումնասիրությունը,

	<p>դասախոսությունը և այլն: Առանձին սովորողների ցանկության դեպքում կխրատուսվի ուսումնական թղթապանակի օգտագործումը: Մոդուլի ուսումնառության ընթացքում սովորողները ակտիվորեն ներգրավված են լինելու որևէ ծրագրի, նախագծի, դասընթացի կամ այլ միջոցառման փոքրամասշտաբ գնահատման աշխատանքներում: Նրանցից պահանջվելու է ակտիվորեն մասնակցել ներլսարանային քննարկումներին և սեփական փորձը փոխանակել համակուրսեցիների հետ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:</p>
Ուսումնառության արդյունք 3	Կատարել ընթացիկ, ամփոփիչ գնահատում, ձևավորել կիսամյակային ու տարեկան գնահատականներ:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է գնահատում աշակերտներին բալային համակարգով, բ. ճիշտ է հասկանում գնահատման սկզբունքները և առանձնահատկությունները ըստ առաջադրանքների բարդության աստիճանների, գ. նպատակային և ճիշտ է կատարում ընթացիկ գնահատումը, դ. նպատակային և ճիշտ է կատարում ամփոփիչ գնահատումը, ե. ճիշտ է որոշում կիսամյակային ու տարեկան գնահատականները:</p>
Գնահատման միջոց	<p>Գնահատման համար</p> <ul style="list-style-type: none"> • գործնական ցուցադրում իրականացնել, • Ճշգրիտ նշել սովորողների գնահատման 4 (չորս) եղանակ, • Ճշգրիտ նշել սահմանված տարրերի բարդության մակարդակները` կիրառելով Բլումի տաքսոնոմիան: <p>Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Մոդուլի ուսուցման ընթացքում դասավանդողից մեծ ջանքեր կպահանջվեն` կիրառելով ուսումնառության և գնահատման ժամանակակից փոխազդում մեթոդներ, որտեղ գլխավոր խնդիրը հանդիսանում է ունկնդրի ուսումնառությունը: Բացի առկա գրականությունից, դասավանդողները նպատակաուղղված կլինեն մոդուլի մեջ ընդգրկել նաև նոր նյութեր, ռեսուրսներ, որոնք կհարստացնեն և կլրացնեն մոդուլը: Մոդուլի թեմաները դասավանդելու համար առաջարկվող մեթոդներ կարող են լինել մտքերի տարափր, ԽԻԿ, փոքր խմբերով աշխատանքը, դերային խաղը, բաց բանավեճը, դեպքի ուսումնասիրությունը, դասախոսությունը և այլն: Առանձին սովորողների ցանկության դեպքում կխրատուսվի ուսումնական թղթապանակի օգտագործումը: Մոդուլի ուսումնառության ընթացքում սովորողները ակտիվորեն ներգրավված են լինելու որևէ ծրագրի, նախագծի, դասընթացի կամ այլ միջոցառման փոքրամասշտաբ գնահատման աշխատանքներում: Նրանցից պահանջվելու է ակտիվորեն մասնակցել ներլսարանային քննարկումներին և սեփական փորձը փոխանակել համակուրսեցիների հետ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 2 ժամ:</p>
Ուսումնառության արդյունք 4	Կիրառել գնահատման մեթոդաբանությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում ուսումնառության արդյունքների ստուգման միավորային սանդղակով գնահատման համակարգը,

	<p>բ. Ճիշտ է կիրառում առարկայական չափորոշիչները ուսումնառության արդյունքների ստուգման համար,</p> <p>գ. Ճիշտ է կիրառում առարկայական ծրագրում ներկայացված գնահատման ժամանակակից ձևերը:</p>
Գնահատման միջոց	<p>Գործնական աշխատանք դեպքի ուսումնասիրության միջոցով: Կատարել հետևյալ ընթացակարգերը կատարողականը բարելավելու համար`</p> <ul style="list-style-type: none"> • բացահայտել սխալները • ուղղել սխալները • հետադարձ կապի ապահովման ընթացքը/ռազմավարությունները • ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը <p>Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն: Գործնական աշխատանքների համար մշակված անկետաների, հարցաթերթիկների և պրակտիկայում կիրառվող այլ միջոցների նմուշօրինակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք` 2 ժամ</p> <p>Գործնական աշխատանք` 2 ժամ:</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Կիրառել գնահատման արդյունքների սանդղակավորում</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. Ճիշտ է ներկայացնում կիսամյակային և տարեկան վերջնական ամփոփիչ գնահատականների ձևավորումը</p> <p>բ. Ճիշտ է ներկայացնում գնահատման արդյունքների սանդղակավորումը և առաջադիմության վիճակագրության պատկերագրումը,</p> <p>գ. Ճիշտ է կատարում գնահատումների և գնահատականների գրանցումը և հաշվառումը,</p> <p>դ. Ճիշտ է կիրառում գնահատման նոր մոտեցումները. գնահատման սանդղակը (ռուբրիկ), ուսումնական թղթապանակը,</p> <p>ե. Ճիշտ է ներկայացնում եվրոպական լեզվական թղթապանակի (ԵԼԹ) բովանդակությունը և կառուցվածքը,</p> <p>զ. Ճիշտ է կիրառում ԵԼԹ-ն եվրոպական լեզվաքաղաքականության և լեզվակրթության համատեքստում:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գնահատման սանդղակի միջոցով նախագծերի պաշտպանությունից հետո: Ուսուցման ընթացքում ուսանողին հանձնարարվում է 3 հետազոտական նախագիծ`</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել գնահատման արդյունքների սանդղակավորումը և առաջադիմության վիճակագրության պատկերագրումը. • ներկայացնել գնահատման նոր մոտեցումները. գնահատման սանդղակը (ռուբրիկ), ուսումնական թղթապանակ • ներկայացնել եվրոպական լեզվական թղթապանակի (ԵԼԹ) բովանդակությունը և կառուցվածքը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Դասավանդողը պետք է կարողանա գնահատման եղանակները համապատասխանեցնել իր կողմից օգտագործվող ուսուցման/ուսումնառության մեթոդներին, կարողանա մշակել գնահատման մեթոդներ և հիմնավորել ստացված արդյունքները, կարողանա դրսևորեն անհատական մոտեցում գնահատման ժամանակ, օգտագործի սովորողի ինքնագնահատման և համակուրսեցու գնահատման մեթոդներ, կիսվի սովորողի առաջադիմության վերաբերյալ</p>

	տեղեկատվությունը սովորողի, մանկավարժական կոլեկտիվի, ծնողների հետ: Սովորողները պետք է հասկանան որ իրենք են պատասխանատու իրենց ուսումնառության համար և գնահատումը իրենց առաջընթացի մասին տեղեկատվություն է, որը կարող են օգտագործել այն բարելավելու համար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 2 ժամ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՈԼԴ 4-09-011
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» և որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է` սովորողին տալ գիտելիք դասին նախապատրաստվելու սկզբունքների, եղանակների և առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորել գրավոր և բանավոր առաջադրանքներ և թեստային աշխատանքներ կազմելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական պարապմունք` 12 ժամ Գործնական աշխատանք` 6 ժամ:
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001«Հոգեբանություն», ՈԼԴ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈԼԴ 4-09-006 «Ուսուցման գործընթաց», ՈԼԴ 4-09-007 «Դրդապատճառային տեխնիկայի կիրառում», ՈԼԴ 4-09-008 «Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում», ՈԼԴ 4-09-009 «Համագործակցային ուսումնառություն» մոդուլները:
Ուսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է` <ol style="list-style-type: none"> 1. իմանա ուսուցման կազմակերպման ձևերը, 2. իմանա դասի տիպերը, 3. կազմի թեմատիկ պլան, 4. սահմանի դասի նպատակը, 5. կազմի դասի պլան` ընդգրկելով/վերլուծելով անհրաժեշտ պահանջները, 6. կազմի գրավոր և բանավոր առաջադրանքներ և թեստային աշխատանքներ` ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ուսուցման կազմակերպման ձևերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մանկավարժական համակարգերի կազմակերպման ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում դաս-դասարանային համակարգի ընդհանուր բնութագիրը, գ. ճիշտ է ներկայացնում ուսումնական գործընթացի կազմակերպման լրացուցիչ ձևերը:
Գնահատման միջոց	Թեստ մի քանի ճիշտ պատասխաններով: Ուսանողին ներկայացված է առաջադրանք, որտեղ կարող են լինել մի քանի պատասխաններ: Շրջանակի մեջ վերցնել ճիշտ պատասխանը: Բաց տիպի առաջադրանք. լրացնել բաց թողնված բառը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գործնական աշխատանքների համար մշակված անկետաների, հարցաթերթիկների և պրակտիկայում կիրառվող այլ միջոցների մոնիթորինգներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ դասի տիպերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դասի ավանդական և ժամանակակից տիպերը, բ. ճիշտ է ներկայացնում դասն իբրև ամբողջական համակարգ, գ. ճիշտ է ներկայացնում ԽԻԿ (Խթանում, Իմաստի ընկալում, Կշռադատում) համակարգի դասը, դ. ճիշտ է ներկայացնում դասի կազմակերպման լրացուցիչ ձևերը:
Գնահատման միջոց	Ուսումնառության գործընթացում ուսանողի իմացությունը վկայող բոլոր արդյունքները գնահատման նպատակով հավաքվում են թղթապանակում: 1. Անհատական աշխատանք` գրավոր ներկայացնել դասի պլան կազմելու չորս պատճառ: 2. Վեճի դիագրամայի միջոցով նշել /գնահատել/ ավանդական դասի պլանի և ԽԻԿ պլանի տարբերությունները:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Դասավանդողը այս մոդուլի դասավանդման ժամանակ կարող է` • կիրառել գնահատման բանավոր և գրավոր մեթոդներ, • գուզակցել խմբային և անհատական աշխատանքները, • կիրառել դասի պլանավորման տարբեր մոտեցումներ և աշխուժացնել դասը փոխգործուն մեթոդների շնորհիվ:
Ուսուցման երաշխավորված	Տեսական պարապմունք` 2 ժամ

ժամաքանակ	Գործնական աշխատանք՝ 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 3	Կազմել թեմատիկ պլան
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում առարկայի ծրագրի պահանջները և ժամաքանակը, բ. ճիշտ է ներկայացնում թեմատիկ պլանի կառուցվածքը, գ. ճիշտ է կազմում թեմատիկ պլանը՝ կիրառելով առարկայական ծրագրում զետեղված բովանդակային միջուկը:
Գնահատման միջոց	Գործնական խմբային աշխատանք. տարբեր մոտեցումների հիման վրա կազմել թեմատիկ պլան, մեկնաբանել կառուցվածքը: Օգտագործելով առարկայական ծրագրի բովանդակային միջուկը տալ ժամաքաշխույժ ըստ թեմաների:
Սեթողաբանություն և ռեսուրսներ	Դասախոսություն, անհատական և խմբային գործնական աշխատանք: Մասնագիտական գրականություն: Դասավանդողից կպահանջվի օգտագործել պլանի տարբեր օրինակներ, ուշադրությունը կենտրոնացնել ծրագրի, չափորոշիչների բովանդակության արտացոլմանը թեմատիկ պլանում: Իսկ խմբային քննարկումներում կհստակեցնեն ստացած մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորությունները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 4	Սահմանել դասի նպատակը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «ուսումնական նպատակներ» և «ուսումնառության արդյունք» հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում ուսումնական նպատակների սահմանման անհրաժեշտությունը, գ. ճիշտ է ներկայացնում ուսումնական նպատակների աստիճանակարգը (տաքսոնոմիաները) և դրանց նշանակությունը, դ. ճիշտ է ձևակերպում դասի նպատակը, ե. ճիշտ է բխեցնում ուսումնական բովանդակությունը ուսումնական նպատակների հիման վրա:
Գնահատման միջոց	Սովորողները կաշխատեն խմբերով և կներկայացնեն վարքագծային նպատակների տեսանկյունից գրված վարժություն, որում կնշեն աֆեկտիվ, ճանաչողական և հոգեշարժային բնագավառներից յուրաքանչյուրում օգտագործվող բայերի համակարգը: Այդ նյութերը կպահպանվեն թղթապանակում:
Սեթողաբանություն և ռեսուրսներ	Ուսուցման ընթացքում սովորողը ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում (գիտելիք) ու համադրում է դրանք իր նախնական գիտելիքների հետ (իմաստավորում), նոր գիտելիքները դարձնում է կիրառական (կիրառում), ապա գնում դեպի գիտելիքների խորացման (վերլուծության): Այս ամենին հաջորդում է համադրման և որոշում կայացնելու աստիճանը (գնահատում): Այս ամենը պետք է հիմք դարձնել ուսուցման նպատակների ձևակերպման համար: Կարողությունների վրա հիմնված կրթության և ուսուցման նպատակն է նկարագրել արդյունքները կատարողականության չափորոշիչների միջոցով
Ուսուցման երաշխավորված	Տեսական պարապմունք՝ 2 ժամ

ժամաքանակ	Գործնական աշխատանք՝ 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 5	Կազմել դասի պլան՝ վերլուծելով անհրաժեշտ պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դասի պլանավորման համար նախնական պայմանների ուսումնասիրության անհրաժեշտությունը, բ. ճիշտ է վերլուծում և աշակերտների և դասարանի մակարդակը, գ. ճիշտ է սահմանում դասի խնդիրները, դ. ճիշտ է իրականացնում դասավանդման և ուսումնառության ռազմավարությունների ընտրությունը, ե. ճիշտ է ընտրում մեթոդները՝ դասի խնդիրներն իրականացնելու համար . զ. ճիշտ է կազմում դասի պլանն՝ ըստ թեմատիկ պլանի:
Գնահատման միջոց	Կառաջարկվի բազմակի ընտրությամբ հարցաշար, որտեղ կպահանջվի գնահատման միջոցները համապատասխանեցնել տրված ուսումնառության նպատակներին: Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Դասավանդողը այս մոդուլի դասավանդման ժամանակ կարող է՝ <ul style="list-style-type: none"> • կիրառել գնահատման բանավոր և գրավոր մեթոդներ, • զուգակցել խմբային և անհատական աշխատանքները: Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 6	Կազմել գրավոր ու բանավոր առաջադրանքներ և թեստային աշխատանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կազմում գրավոր առաջադրանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների, բ. ճիշտ է կազմում բանավոր առաջադրանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների, գ. ճիշտ է կազմում թեստային առաջադրանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների, դ. ճիշտ է թվարկում դասավանդման և ուսումնառության նյութերի մշակման և պատրաստման ընթացակարգերը և պահանջները, ե. ճիշտ է օգտագործում պատրաստված նյութերը աշխատանքի ընտրված բաժնում:
Գնահատման միջոց	Ինչպե՞ս համապատասխանեցնել գնահատման գործիքները ուսումնառության նպատակներին՝ <ul style="list-style-type: none"> • նպատակների վերլուծություն • ուսումնառության արդյունքների և սովորողներից ակնկալվող գործունեության ճշգրիտ նկարագրություն համապատասխան գնահատման գործիքի ընտրության չափանիշներ:
Մեթոդաբանություն և	Մշակված և իրականացված դասերից յուրաքանչյուրի վերաբերյալ գրել մոտ 100 բառից բաղկացած հաշվետվություն, ո-

ռեսուրսներ	<p>րուն ընդգրկված կլինեն հղումներ դասի պատրաստման և կազմակերպման փուլերին, հիմնավորումներ ընտրված մեթոդների, միջոցների և այլ պարագաների նպատակահարմարության մասին, նկարագրված կլինեն նախատեսված դասերից կատարված շեղումներ՝ իրենց իրականացման ընթացքում, ինչպես նաև կրնութագրվեն վերահսկողություն իրականացրած անձի/անձանց հետ կատարված աշխատանքները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե սովորողը կարողանում է ճշտորեն բացահայտել և նկարագրել դասավանդվող ուսումնառության մեթոդները և կատարել դրանց գնահատում՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը սովորողների համար:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 1 ժամ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՈՒԴ 4-09-012
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ լեզվի, դրա հատկանիշների և գործառնությունների, ինչպես նաև լեզվի բնույթի, ծագման, զարգացման, ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	<p>18 ժամ Տեսական պարապմունք՝ 12 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ:</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒԴ 4-09-001 «Հոգեբանություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքներ	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. իմանա լեզվի հիմնական հատկանիշները, 2. իմանա լեզվի ծագումը և զարգացումը, 3. իմանա լեզուների ծագումնաբանական և տիպաբանական ընդհանրությունները և տարբերությունները, 4. իմանա լեզու, բարբառ և ժարգոն հասկացությունները, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար

	<i>մակարդակի ապահովումն է:</i>
Ուսումնառության արդյունք 1	<i>Իմանալ լեզվի հիմնական հատկանիշները</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ է որոշում տվյալ լեզվի բնույթը, բ. ճիշտ է ներկայացնում լեզվի երկկողմանի միավորներն իբրև արտահայտության և բովանդակության տարբեր բարդություն ունեցող միասնություններ, գ. ճիշտ է ներկայացնում հաղորդակցման ակտի թեմա-ռեմատիկ հորինվածքը, դ. ճիշտ է ներկայացնում լեզվի դերը հասարակության կյանքում:</i>
Գնահատման միջոց	<i>Բանավոր հարցում, գործնական աշխատանքներ: Ինքնուրույն, անհատական տնային գրավոր աշխատանք. «գ» կետի համար ընտրած կամ ինքնուրույնաբար կազմած գրավոր հակիրճ տեքստի կառուցվածքի միջոցով ուսանողը լուսաբանում է հաղորդակցման թեմա-ռեմա պարբերական անցումները:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս միտված հաղորդակցային իրադրություններին:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 1 ժամ:</i>
Ուսումնառության արդյունք 2	<i>Իմանալ լեզվի ծագումը և զարգացումը</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ է ներկայացնում լեզուների ծագման հիմնական տեսությունները, լուսաբանում է լեզվի ծագման խնդիրը լեզվաբանական գիտության վերջին նվաճումների լույսի տակ, ճիշտ է խմբավորում դրանք բնական և հասարակական կոչված խմբերում, բ. ճիշտ է ներկայացնում լեզվի զարգացման պարզագույն ընթացումներն ու դրանց ժամանակակից մեկնաբանությունները, շարժման և դադարի, էներգիայի և էրգոնի, սինխրոնիայի և դիսխրոնիայի հետ եղած կապը, գ. ճիշտ է տարբերակում լեզվի զարգացման ներքին և արտաքին դրդիչները, դ. ճիշտ է ներկայացնում հին հույների ֆյուսեսյ և թեսեսյ տեսություններն իրի և անվան կապի մասին:</i>
Գնահատման միջոց	<i>Բանավոր հարցում: Գործնական աշխատանքներ: Ինքնուրույն, անհատական տնային գրավոր աշխատանք. լեզվի ծագման տեսությունները բնագիտական և հասարակական խմբերին դասակարգելու հանձնարարությամբ:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Տեսական ուսուցում: Գործնական աշխատանք: Դասագիրք, տեղեկատվական լրացուցիչ նյութեր ինտերնետից:</i>
Ուսուցման երաշխավորված	<i>Տեսական պարապմունք՝ 3 ժամ</i>

ժամաքանակ	Գործնական աշխատանք՝ 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ լեզուների ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումները, դրանց ընդհանրությունները և տարբերությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում լեզվաընտանիք, լեզվաճյուղ, հեռու և մոտիկ ցեղակցության լեզուներ, նախալեզու, քույր և եղբայր լեզուներ հասկացությունները հնդեվրոպական լեզվաընտանիքի նյութի հիման վրա, բ. ճիշտ է ներկայացնում լեզուների ձևաբանական դասակարգումը, տիպերը, ընդհանրություններն ու տարբերությունները, գ. ճիշտ է ներկայացնում լեզուների տիպաբանական դասակարգումը նախնական պարզագույն վիճակից մինչև ժամանակակից տիպաբանական համակարգը, դ. ճիշտ է տարբերակում լեզվաընտանիքի և լեզվամիության (Shprachbund) առանձնահատկությունները:
Գնահատման միջոց	Բանավոր հարցում: Գործնական աշխատանքներ: Չանձնարարված լեզվաընտանիքներից ընտրված և ցուցակով ներկայացված լեզուների համար ուսանողը որոշում է լեզվաընտանիքը, լեզվաճյուղը և ենթաճյուղը: Նույնը կարելի է ստուգել դասախոսի նախօրոք կազմած գրաֆիկական պատկերով, ուր արսիսների առանցքի վրա ներկայացված են վերը նշված լեզուները, իսկ օրդինատների առանցքին՝ ցեղակցության բնութագրիչները, որոնց հատման վանդակում ուսանողը նշում է կատարում առնչության մասին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ նյութեր՝ աշխարհի լեզվաընտանիքների մասին, հնդեվրոպական լեզվաընտանիքը տոհմածառի տեսքով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ լեզու, բարբառ և ժարգոն հասկացությունները, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխարհի լեզվական քարտեզը, բ. ճիշտ է ներկայացնում լեզվի հատկանիշներն ու սահմանումները, գ. ճիշտ է ներկայացնում լեզու – լեզու, լեզու - բարբառ, բարբառ - բարբառ զուգահեռները, դ. ճիշտ է ներկայացնում մասնագիտական լեզու – համաժողովրդական լեզու ոլորտների ընդհանրություններն ու տարբերությունները, ե. ճիշտ է ներկայացնում բառապաշար, եզրութապաշար, անվանակարգ ոլորտների ընդհանրություններն ու տարբերությունները:
Գնահատման միջոց	Բանավոր հարցում: Գործնական աշխատանքներ: Ինքնուրույն, անհատական տնային գրավոր աշխատանք՝ լեզուների գրական և տարածական տարբերակների /բարբառների/ հնչյունային, բառային և քերականական տարբերությունների ցուցադրման նպատակով:

	Մոդուլային գրավոր աշխատանք ուսումնառության արդյունքների թեմաներով:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում: Գործնական աշխատանք: Դասագիրք, տեղեկատվական լրացուցիչ նյութեր ինտերնետից:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ»	
Մոդուլի դասիչը	ՈԼԴ 4-09-013
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ լեզվաբանություն մակրոգիտության, դրա տեղի և դերի մասին՝ բոլոր, հատկապես հասարակական գիտությունների շարքում:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական պարապմունք՝ 12 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ:
Մուտքային պահանջները	Չկան
Ուսումնառության արդյունքներ	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. իմանա պատմահամեմատական լեզվաբանությունը որպես գիտական լեզվաբանության ճյուղ և պատմահամեմատական մեթոդի տեսական և գործնական սկզբունքները, 2. իմանա «ընդհանուր լեզվաբանություն» գիտաճյուղը, «ընդհանուր համեմատությունների» մեթոդը և առնչությունը «մասնավոր լեզվաբանություն» գիտաճյուղին ու նրա ուսումնասիրության մեթոդներին, 3. իմանա լեզվաբանական աշխարհագրություն ճյուղը և դրա ուսումնասիրության մեթոդը, 4. իմանա «սոցիոլոգիզմ» ուղղությունը, դրա ժնկի և Փարիզի դպրոցները, Ֆ. դը Սոսյուրի երկատումները, 5. իմանա «կառուցվածքային լեզվաբանություն» ուղղությունը և դրա չեխական, դանիական, ամերիկյան, լոնդոնյան և խորհրդային դպրոցները, դրանց բերած մեթոդական նորությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Իմանալ պատմահամեմատական լեզվաբանությունը որպես գիտական լեզվաբանության առաջին ծյուղ և պատմահամեմատական մեթոդի տեսական և գործնական սկզբունքները:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական լեզվաբանության ստեղծման նախադրյալները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիրներին և առաջին գիտական լեզվաբանության ձևավորման ընթացքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում լեզուների ցեղակցության գաղափարը գիտականորեն հիմնավորող առաջին ներկայացուցիչների գործունեությունը հնդեվրոպական լեզուների ոլորտում,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական մեթոդի տեսական և գործնական սկզբունքները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում լեզուների ծագումնաբանական դասակարգման էությունն ու ընթացակարգը:</p>
Գնահատման միջոց	Բանավոր հարցում. Գործնական աշխատանքներ: «Դ» կետի գնահատման համար պատմահամեմատական մեթոդի խառը ձևով ներկայացված սկզբունքները ուսանողը դասակարգում է իբրև տեսական կամ գործնական սկզբունքներ:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում: Գործնական աշխատանք: Դասագիրք, տեղեկատվական լրացուցիչ նյութեր ինտերնետից: Մշակումներ հանձնարարված գրականությունից: Գրատախտակ, գունավոր կավիճներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ «ընդհանուր լեզվաբանություն» գիտաճյուղը, «ընդհանուր համեմատությունների մեթոդը» և առնչությունը «մասնավոր լեզվաբանություն» գիտաճյուղին ու նրա ուսումնասիրության մեթոդներին:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ընդհանուր լեզվաբանության հիմնական հասկացությունները,</p> <p>բ. ճիշտ է տարբերակում անհատի լեզու, ազգային լեզու և համամարդկային լեզու հասկացությունները և ներկայացնում դրանց ընդհանուր կապերը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ընդհանուր համեմատությունների մեթոդի սկզբունքները,</p> <p>դ. լեզվից վերցված պարզագույն օրինակների վրա ճիշտ է ցուցադրում ազգային լեզվի (քերականության) և մտածողության փոխազդեցությունն ու պատմական փոխալսման ավորվածությունը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում մասնավոր լեզվաբանության նպատակը, խնդիրները և հիմնական հասկացությունները,</p> <p>զ. ճիշտ է տարբերակում մասնավոր լեզվաբանության գիտական և նորմատիվ քերականությունների խնդիրներն ու նպատակները:</p>
Գնահատման միջոց	Բանավոր հարցում. Գործնական աշխատանքներ: Ընդհանուր և մասնավոր լեզվաբանությունների առանձնահատկությունների գրավոր թվարկում:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Դասախոսություն և գործնական աշխատանք: Վերլուծություն և համադրում՝ ընդհանրությունների և տարբերությունների ցուցադրմամբ: Լեզվի և գիտակցության, խոսքի և մտածողության միջև զուգահեռների նշարում: Գրատախտակ, գունավոր

	<i>կավիճներ:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:
Ոխուճանառության արդյունք 3	Իմանալ «ընդհանուր լեզվաբանություն» գիտաճյուղը, «ընդհանուր համեմատությունների մեթոդը» և առնչությունը «մասնավոր լեզվաբանություն» գիտաճյուղին ու նրա ուսումնասիրության մեթոդներին:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ընդհանուր լեզվաբանության հիմնական հասկացությունները, բ. ճիշտ է տարբերակում անհատի լեզու, ազգային լեզու և համամարդկային լեզու հասկացությունները և ներկայացնում դրանց ընդհանուր կապերը, գ. ճիշտ է ներկայացնում ընդհանուր համեմատությունների մեթոդի սկզբունքները, դ. յոթագրեցությունն ու պատմական փոխաբանականությունները, ե. ճիշտ է ներկայացնում մասնավոր լեզվաբանության նպատակը, խնդիրները և հիմնական հասկացությունները, զ. ճիշտ է տարբերակում մասնավոր լեզվաբանության գիտական և նորմատիվ քերականությունների խնդիրներն ու նպատակները:
Գնահատման միջոց	Բանավոր հարցում: Գործնական աշխատանքներ:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Լեզվի և նրա տարածական տարբերակների միջև համեմատությունների միջոցով նույնական, նմանական և տարբեր միավորների ցուցադրումը շարքերով: Վերլուծություն և համադրում՝ ընդհանրությունների և տարբերությունների ցուցադրմամբ: Գրատախտակ, գունավոր կավիճներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:
Ոխուճանառության արդյունք 4	Իմանալ «սոցիոլոգիզմ» ուղղությունը, դրա ժնկի և Փարիզի դպրոցները, Ֆ.դը Սոսյուրի երկատումները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիզմի առաջացման պատմական նախադրյալները, բ. ճիշտ է ներկայացնում Ֆ. դը Սոսյուրի ծառայությունները պատմահամեմատական լեզվաբանության ոլորտում և նոր լեզվաբանության հիմնադրման գործում, գ. ճիշտ է ներկայացնում Սոսյուրի լեզվաբանական տեսության կառույցը որպես երկատումների համակարգ, դ. ճիշտ է ներկայացնում Սոսյուրի տեսության զարգացումը ժնկի և Փարիզի դպրոցների նրա աշակերտների և համախոհների կողմից, ե. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիզմի ազդեցությունը նկարագրական կառուցվածքային լեզվաբանության ձևավորման, զարգացման և տարածման գործում:
Գնահատման միջոց	Բանավոր հարցում: Գործնական աշխատանքներ: Սոսյուրյան երկատումների գրավոր սխեմատիկ ներկայացում ուսանողի կողմից:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Լեզվի կարգային բովանդակության վերլուծության տարրերի ներկայացում: Իմացաբանական անցում արիստոտելյան երկանդամ հակադրություններից հեգելյան եռանդամության: Գրատախտակ, գունավոր կավիճներ, կոդոսկոպ, թափանցաթերթիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 3 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ «կառուցվածքային լեզվաբանություն» ուղղությունը և դրա չեխական, դանիական, ամերիկյան, լոնդոնյան և խորհրդային դպրոցները, դրանց բերած մեթոդական նորությունները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում չեխական ֆունկցիոնալ կառուցվածքային լեզվաբանական դպրոցը և նրա բերած գիտական-մեթոդական նորությունները, բ ճիշտ է ներկայացնում Կոպենհագենի համալսարանի կառուցվածքային լեզվաբանական գլոսսեմատիկա դպրոցը իբրև ունիվերսալ քերականություն, գ. ճիշտ է ներկայացնում ամերիկյան Յել և Մասաչուսեթս նահանգներում ձևավորված կառուցվածքային լեզվաբանական դպրոցներն ու նրանց բերած գիտական-մեթոդական նորությունները, դ. ճիշտ է ներկայացնում խորհրդային և հայկական կառուցվածքաբանական դպրոցները և նրանց դեմ մղվող պայքարը, ե. ճիշտ է ներկայացնում կառուցվածքային լեզվաբանության մեթոդների ընդհանուր բնութագիրը:
Գնահատման միջոց	Բանավոր հարցում: Մոդուլային գրավոր աշխատանք ուսումնական արդյունքների թեմաներով:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Ամբողջական կառուցվածքի տեսության ձևավորման գործընթացի ցուցադրում լեզվաբանական տարրեր դպրոցների բերած բաղադրիչներից, քանակական հատկանիշներից որակական փոփոխության առաջացումը: Գրատախտակ, գունավոր կավիճներ, կոդոսկոպ, թափանցաթերթիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 3 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:
ՍՈՐՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՎԻ ՀԱՍԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»	
Մոդուլի դասիչը	ՈԼԴ 4-09-014

Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիք լեզվի երկու գոյաձևերի՝ իբրև համակարգ և կառուցվածք, նրանց փոխակերպումների, միավորների և նրանց միջև գործող հարաբերությունների մասին, որոնց գործարկումով հնարավոր է դառնում իրագործել հասարակության համար լեզվի կարևորագույն՝ հաղորդակցական դերը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական պարապմունք՝ 25 ժամ Գործնական աշխատանք՝ 11 ժամ:
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՌԼԴ 4-09-001 «Հոգեբանություն», ՌԼԴ 4-09-009 «Համագործակցային ուսումնառություն», ՌԼԴ 4-09-011 «Դասի նախապատրաստում» մոդուլները:
Ուսումնառության արդյունքներ	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. տարբերակի «լեզվի համակարգ» և «լեզվի կառուցվածք» հասկացությունները, իմանա «լեզու» և «լեզվաբանություն» հասկացությունների բաղադրիչների հարաբերությունները՝ որպես լեզվի կառուցվածքային մակարդակ և լեզվաբանության բաժին, 2. իմանա լեզվի «հնչյութային մակարդակ» և «հնչյունաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը, 3. իմանա «լեզվի ձևաբանական մակարդակ» և «ձևաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը և քերականական կարգի կառուցվածքը, 4. իմանա «լեզվի նշանային մակարդակ» և «բառագիտություն (նշանագիտություն)» հասկացությունների հարաբերակցությունը, 5. իմանա «լեզվի ստորոգական մակարդակ» և «շարահյուսություն» հասկացությունների հարաբերակցությունը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տարբերել «լեզվի համակարգ» և «լեզվի կառուցվածք» հասկացությունները, իմանալ «լեզու» և «լեզվաբանություն» հասկացությունների բաղադրիչների հարաբերությունները՝ որպես լեզվի կառուցվածքային մակարդակներ և լեզվաբանության բաժիններ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «լեզվի մակրոհամակարգ» հասկացությունը՝ որպես միկրոհամակարգերի համակարգ, բ. ճիշտ է ներկայացնում «լեզվի կառուցվածք» հասկացությունը՝ որպես լեզվական մակարդակների ենթադասություն, գ. ճիշտ է ներկայացնում «լեզվի մակարդակ» և «լեզվաբանության բաժիններ» հարաբերակցությունը,

	դ. ճիշտ է ներկայացնում լեզվի մակարդակները դրանց միավորներն ու նրանց միջև գործող հարաբերությունները սահմանելու ընթացակարգը, ե. ճիշտ է ներկայացնում լեզվաբանության բաժիններն ու ենթաբաժինները:
Գնահատման միջոց	Բանավոր հարցում: Լեզվի մակարդակների և դրանք ուսումնասիրող լեզվաբանության բաժինների սխեմատիկ ցուցադրում գրավոր աշխատանքում:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Մեթոդաբանական մոտեցումներ կոնկրետից վերացականի և պարզից բարդի անցման երևույթի ցուցադրմամբ՝ լեզվական հարուստ նյութի վրա: Գրատախտակ, գունավոր կավիճներ, կոդոսկոպ, թափանցաթերթիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 5 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ «լեզվի հնչության մակարդակ» և «հնչյունաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հնչության մակարդակի միավորների ինտեգրալ հատկանիշները, միավորների բնութագրերը, բ. ճիշտ է ներկայացնում հնչույթ-հնչյուն տարբերակումը, հնչույթի սահմանումները, տարբերակիչ հատկանիշն իբրև լեզվի արտահայտության պլանի նվազագույն միավոր և հնչության համակարգերի առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում հնչյունների ֆիզիկական և ֆիզիոլոգիական հատկանիշներն ու դրանց բնութագրերը, դ. ճիշտ է դասակարգում բառերի հնչյունային շղթայում կատարվող պատմական փոփոխությունները, ե. ճիշտ է ներկայացնում հնչյունաբանության ենթաբաժինները և դրանց ուսումնասիրության առարկան, զ. ճիշտ է ներկայացնում գրի ծագման, զարգացման և տեսակների առանձնահատկությունները:
Գնահատման միջոց	Բանավոր հարցում: Ինքնուրույն, անհատական տնային գրավոր աշխատանքներ՝ հայերենի բաղաձայն հնչույթները իբրև տարբերակիչ հատկանիշների փնջեր ներկայացնելու և դրանից բխող՝ տարբեր քանակի տարբերակիչ հատկանիշներ պարունակող երկանդամ հնչության հակադրություններ կազմելու հանձնարարություններով:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Միջառարկայական կապեր՝ լեզվաբանություն - ֆիզիկա - ֆիզիոլոգիա: Հնչյունն ու նրա հատկանիշներն իբրև տարբեր գիտակարգերի ուսումնասիրության միավոր: Համապատասխան գրականություն, լրացուցիչ նյութեր, Գրատախտակ, գունավոր կավիճներ, կոդոսկոպ, թափանցաթերթիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 5 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ «լեզվի ձևության մակարդակ» և «ձևաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը և քերականական

	<i>կարգի կառուցվածքը:</i>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում լեզվի ձևաբանության սահմանումը, տեսակների սահմանազատումը՝ ըստ արտահայտած իմաստի տիպերի և ըստ բառի կազմում գրաված դիրքի,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում օբյեկտիվ իրականության լեզվական արտացոլման իմաստաբանական մակարդակները՝ ըստ փաստերի ընդհանրացման ու վերացարկման աստիճանների,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում արմատական ձևաբանության ձևափոխության և գործառական առանձնահատկությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում բառակազմական/ածանցական ձևաբանության ձևափոխության և գործառական առանձնահատկությունները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում վերաբերական ձևաբանության ձևափոխության և գործառական առանձնահատկությունները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում «քերականական կարգ», «քերականական իմաստ» և «քերականական արտահայտության միջոցներ» հասկացություններն ու նրանց հետ կապված հասկացական ապարատը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում քերականական իմաստների արտահայտության քերականական տեխնիկաները:</p>
Գնահատման միջոց	<p>Բանավոր հարցում:</p> <p>Ինքնուրույն, անհատական տնային գրավոր աշխատանքներ՝ այս կամ այն կատեգորիալ նշանակությունը ինչպես է հայերենում զուգահեռաբար արտահայտվում արմատական, բառակազմական և բառահարաբերական ձևաբանությունը, և հայերենի անձանաչելի արմատների բացահայտում և ներկայացում:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Կոնկրետն ու վերացականը լեզվում՝ իբրև կոնկրետ իրողություններ՝ դրսևորված տարբեր տեսակի ձևաբանության բովանդակության պլանում: Մեթոդաբանական մոտեցումներ՝ կոնկրետից վերացականի և պարզից բարդի անցման երևույթի ցուցադրմամբ՝ լեզվական հարուստ նյութի վրա: Գրատախտակ, գունավոր կավիճներ, կողոսկույ, թափանցաթերթիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 5 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ «լեզվի նշանային մակարդակ» և «բառագիտություն (նշանագիտություն)» հասկացությունների հարաբերակցությունը:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է տալիս բառույթի սահմանումն իբրև լեզվական նշան, դրա հետ կապված սուբյեկտիվ և օբյեկտիվ դժվարությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում բառի ստուգաբանական և ըստ ներքին ձևի վերլուծության օրինաչափությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում բառիմաստի բաղադրիչները, բառույթի բառակազմական և իմաստակազմական կաղապարները, սուբյեկտիվ և օբյեկտիվ, ուղիղ և փոխաբերական իմաստները բառույթում, սենյա, սենյեմա, սենյանտենա հասկացությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում լեզվի կայուն բառակապակցությունների/դարձվածքների տեսակները, իմաստային դաշտերը, թարգմանական համարժեքների ստացման ուղիները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում բառապաշարի տարբեր դասակարգումները, բառարաններում գրառման տեխնոլոգիան, բառարանների տեսակները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում բառույթի ուսումնասիրությամբ զբաղվող բաժինները:</p>

Գնահատման միջոց	<p>Բանավոր հարցում:</p> <p>Ինքնուրույն, անհատական տնային գրավոր աշխատանքներ՝ առանձին բառի իմությունների ներկայացման, համանիշ բառերի միմյանցից ունեցած ինությային տարբերությունների, տարբեր լեզուներում նույնական բառերի բազմիմաստային դաշտերը համեմատելու հանձնարարություններով:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Ընդհանուրի և վերացականի դրսևորման հնարավորությունը բառի եզակի թվի միջոցով: Լեզվական միավորի ընդհանրականության վերածումը կոնկրետ առարկայական վերաբերության՝ խոսքի և իրադրության միջոցով: Կոնկրետի ու վերացականի, բարդի ու պարզի աստիճանական անցման լեզվական օրինաչափությունները: Ուրվագծեր, գրաֆիկական պատկերներ, Գրատախտակ, գունավոր կավիճներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք՝ 5 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Իմանալ «լեզվի ստորոգական մակարդակ» և «շարահյուսություն» հասկացությունների հարաբերակցությունը:</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ստորոգական մակարդակի միավորների ընդհանուր բնութագիրը, բ. ճիշտ է ներկայացնում շարույթը իբրև ստորոգական մակարդակի նվազագույն միավոր, շարույթի տեսակները լեզուներում, միահիմքությունը և բազմահիմքությունը, գ. ճիշտ է ներկայացնում բառակապակցությունն ու դերբայական դարձվածն իբրև ստորոգական մակարդակի միավորներ, դ. ճիշտ է ներկայացնում նախադասությունն իբրև ստորոգական մակարդակի և լեզվի գերագույն միավոր, նախադասության հիմնական հատկանիշները, ե. ճիշտ է ներկայացնում խոսողի վերաբերմունքի դրսևորման լեզվական ձևերը, զ. ճիշտ է ներկայացնում շարահյուսական արտահայտության միջոցները:</p>
Գնահատման միջոց	<p>Բանավոր հարցում:</p> <p>Ինքնուրույն, անհատական տնային գրավոր աշխատանքներ՝ տեքստերից համադրական և վերլուծական, միահիմք և բազմահիմք շարույթները առանձնացված կերպով դուրս գրելու, շարահյուսական արտահայտության միջոցները դասակարգելու հանձնարարությամբ:</p> <p>Մոդուլային գրավոր աշխատանք ուսումնառության արդյունքի թեմաներով:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Ուժեղ ձևաբանություն – թույլ շարահյուսություն և հակառակը՝ բառի ուժեղ և թույլ կողմերը տարբեր լեզուներում: Իրականության միաձևության արտացոլումը լեզվական բազմաձևության միջոցով: Համադրում և հակադրում: Գրատախտակ, գունավոր կավիճներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք՝ 5 ժամ Գործնական աշխատանք՝ 3 ժամ:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ»

Մոդուլի դասիչը	ՈԼԴ 4-09-015
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ արտադասարանային և արտադպրոցական աշխատանքների խնդիրների, սկզբունքների, կազմակերպման հիմնական ձևերի մասին և ձևավորել արտադասարանային և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման ու իրականացման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական պարապմունք՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 10 ժամ:
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001 «ՅՈՒՐԱԳՆԵԼՈՎ» մոդուլը: Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1. իմանա արտադասարանային աշխատանքի ոլորտը, 2. իմանա արտադասարանային աշխատանքի կազմակերպման և արտադպրոցական աշխատանքի համակարգման եղանակները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ արտադասարանային աշխատանքի ոլորտը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադասարանային աշխատանքի նպատակը, սկզբունքներն ու ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում արտադասարանային աշխատանքի պլանավորումը՝ հաշվի առնելով աշակերտների տարիքը և հետաքրքրությունները, գ. ճիշտ է ներկայացնում դասարանային և արտադասարանային աշխատանքների փոխկապակցումը, գ. ճիշտ է ներկայացնում դաստիարակության սկզբունքների և մեթոդների կիրառումը դասի ընթացքում և արտադասարանային աշխատանքի ժամանակ:
Գնահատման միջոց	Ընտրել առաջարկված թեմաներից մեկը և պլանավորել արտադասարանային աշխատանք՝ հաշվի առնելով աշակերտների տարիքը և հետաքրքրությունները: Ձևակերպել նպատակը, շարադրել աշխատանքի փուլերը և մեթոդները: Արդյունքը կհամարվի բավարար, եթե սովորողը տիրապետում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, տարբեր իրավիճակների նկարագրություններով տեքստեր: Ուսանողը պետք է կարողանա հստակ նկարագրել յուրաքանչյուր իրավիճակին համապատասխանող նպատակը, խնդիրները, սկզբունքները և թեմայի և աշակերտների տարիքի համապատասխանությունը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 5 ժամ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ արտադասարանային աշխատանքի կազմակերպման և արտադպրոցական աշխատանքի համակարգման եղանակները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադպրոցական աշխատանքի խնդիրները, սկզբունքները և կազմակերպման հիմնական ձևերը, բ. ճիշտ է համակարգում դպրոցական և արտադպրոցական աշխատանքները՝ ըստ աշակերտների հետաքրքրությունների, գ. ճիշտ է ներկայացնում դպրոցական և արտադպրոցական օլիմպիադաները, մրցույթները, ստուգատեսները:
Գնահատման միջոց	Ուսանողին կտրվեն տարբեր իրավիճակների նկարագրությամբ տեքստեր, որոնց համաձայն՝ նա պետք է համապատասխան որոշումներ ընդունի և հիմնավորի ձեռնարկվող քայլերը: Նպատակահարմար է յուրաքանչյուր ուսանողին տալ այդպիսի 3 տեքստ՝ տարբեր իրավիճակների մասին: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե յուրաքանչյուր իրավիճակի վերաբերյալ ուսանողն ընդունի հիմնավորված և փաստարկված որոշում:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Նախապես մշակված և դերային խաղի միջոցով իրականացված արտադասարանային միջոցառումների համար ներկայացնել մոտ 200 բառից բաղկացած հաշվետվություն, որում կվերլուծվեն ուսանողի ներգրավվածությունը այդ աշխատանքում, ուսանողի ցուցաբերած արդյունքները/ձեռքբերումները՝ հմտությունների և կարողությունների տեսքով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 5 ժամ:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»	
Սողուլի դասիչը	ՈԼԴ 4-09-016
Սողուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Սողուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ կրթության ոլորտի ԶԶ հիմնական օրենքների հիմնադրույթների, հանրակրթության իրականացումը կարգավորող հիմնական իրավական ակտերի, ինչպես նաև ուսումնական գործընթացում դրանց նշանակության մասին:

Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական պարապմունք՝ 12 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ:
Մուտքային պահանջները	Չկան
Ուսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1. իմանա ԳՅ կրթության ոլորտը կարգավորող հիմնական օրենքների հիմնադրույթները, 2. իմանա միջնակարգ դպրոցի պետական չափորոշիչի կառուցվածքը և գործառույթները, 3. իմանա միջնակարգ դպրոցի գործունեությունը կարգավորող հիմնական նորմատիվային իրավական ակտերի և այլ փաստաթղթերի հիմնական դրույթները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ԳՅ կրթության ոլորտը կարգավորվող ԳՅ հիմնական օրենքների հիմնադրույթները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «Կրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները, բ. ճիշտ է ներկայացնում «Հանրակրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները, գ. ճիշտ է ներկայացնում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները, դ. ճիշտ է ներկայացնում «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները և դրա կիրառումը դպրոցում, ե. ճիշտ է ներկայացնում «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները, զ. ճիշտ է ներկայացնում «Երեխաների իրավունքների մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է նախագծերի պաշտպանության միջոցով: Ուսուցման ընթացքում ուսանողների տարբեր խմբերին հանձնարարվում են նախագծեր՝ • կազմել ԳՅ կրթական համակարգի կառուցվածքի գծապատկերը, • հետազոտական նախագիծ ներկայացնել «Հանրակրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները • ներկայացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները • ներկայացնել «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները և դրա կիրառումը դպրոցում. • ներկայացնել «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները • ներկայացնել «Երեխաների իրավունքների մասին» ԳՅ օրենքի հիմնադրույթները:

	<i>Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողները ներկայացնում են նշված աշխատանքները:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Դասախոսություն և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, համապատասխան օրենքներ, որոշակի իրավիճակների նկարագրություններով տեքստեր: Կարող են օգտագործվել մամուլի հրատարակումներ, վերլուծություններ: Առանձին դեպքերում խումբը կարող է բաժանվել մասերի, որոնցից յուրաքանչյուրը հանդես կգա որոշակի իրավիճակների վերաբերյալ իր մտեցումներով:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք` 4 ժամ Գործնական աշխատանք` 2 ժամ:</i>
Ուսումնառության արդյունք 2	<i>Իմանալ միջնակարգ դպրոցի պետական չափորոշչի կառուցվածքը և գործառույթները:</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ է ներկայացնում միջնակարգ դպրոցի պետական չափորոշչի կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում միջնակարգ դպրոցի պետական չափորոշչի գործառույթները:</i>
Գնահատման միջոց	<i>Ուսումնասիրել առարկայական ուսումնական ծրագրերում ներկայացված չափանիշները և համեմատել դրանք միջնակարգ դպրոցի չափորոշչում ներկայացված պահանջների հետ:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Սույն բաժնի յուրացման համար անհրաժեշտ է կիրառել ուսուցման զանազան մեթոդների զուգակցում` նպատակ ունենալով խմբակային քննարկումների, դերային խաղերի, իրավիճակների մոդելավորման միջոցով հասնել հաղորդվող նյութի առավել խորքային ըմբռնմանը, գիտելիքների ձևավորմանը և կարողությունների զարգացմանը` ուսանողակենտրոն ուսուցման միջոցով:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք` 4 ժամ Գործնական աշխատանք` 2 ժամ:</i>
Ուսումնառության արդյունք 3	<i>Իմանալ միջնակարգ դպրոցի գործունեությունը կարգավորող հիմնական նորմատիվային իրավական ակտերի և այլ փաստաթղթերի հիմնական դրույթները:</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանի հիմնադրույթները, բ. ճիշտ է ներկայացնում քննությունների կազմակերպման, աշակերտների փոխադրման, ավարտման կարգի հիմնադրույթները, գ. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի կանոնադրության հիմնադրույթները, դ. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդմիավորման կանոնադրությունների հիմնադրույթները:</i>
Գնահատման միջոց	<i>Բնութագրել հանրակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանի բաղադրիչները:</i>

	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման ընթացքում ուսանողը զծապատկերներով ներկայացնում է հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի և առարկայական մեթոդիավորման կառուցվածքները: Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կներկայացնի կմեկնաբանի նշված զծապատկերները: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է գործնական աշխատանքը և ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում հարցերին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Սույն բաժնի յուրացման համար անհրաժեշտ է կիրառել ուսուցման զանազան մեթոդների զուգորդում՝ նպատակ ունենալով խմբային քննարկումների, դերային խաղերի, իրավիճակների մոդելավորման միջոցով հասնել հաղորդվող նյութի առավել խորքային ըմբռնմանը, գիտելիքների ձևավորմանը և կարողությունների զարգացմանը՝ ուսանողակենտրոն ուսուցման հիման վրա:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ»	
Սողուլի դասիչը	ՈԼԴ 4-09-017
Սողուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Սողուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիք լեզվի երկու գոյաձևերի՝ իբրև համակարգ և կառուցվածք, նրանց փոխակերպումների, միավորների և նրանց միջև գործող հարաբերությունների մասին, որոնց գործարկումով հնարավոր է դառնում իրագործել հասարակության համար լեզվի կարևորագույն՝ հաղորդակցական դերը:
Սողուլի տևողությունը	18 ժամ Տեսական պարապմունք՝ 9 ժամ Գործնական աշխատանք՝ 9 ժամ:
Սուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի բոլոր ուսուցանվող մոդուլները:
Ուսումնառության արդյունքներ	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1. իմանա ինքնագնահատման մեթոդները, 2. վերհանի իր մասնագիտական զարգացման կարիքները, 3. իմանա ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության առանձնահատկությունները:
Սողուլի գնահատման կարգը	Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար

	մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1 Կատարման չափանիշներ	Իմանալ ինքնագնահատման մեթոդները ա. ճիշտ է ընտրում ինքնագնահատման մեթոդները, բ. համարժեք է գնահատում իր կարողունակությունները, գ. համարժեք է գնահատում իր առանցքային հմտությունները:
Գնահատման միջոց	Ուսանողին կառաջադրվեն կոնկրետ թեստեր, որոնց միջոցով նա կկարողանա որոշել իր ուսումնառության ոճերը, խնդիրներ՝ մանկավարժական հայտորոշման /անձի բնավորության տիպի ուսումնասիրության, մտածողության, վարքի, շփման ոճերի և այլն/ վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է գործնական աշխատանքը և ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում հարցերին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տալ գաղափար ինքնագիտակցության կամ «Ես» պատկերի մասին, առանձնացնել ինքնագիտակցության բաղադրիչները, կառուցվածքը, առանձնահատկությունները: Ներկայացնել ինքնագնահատականը, որպես «Ես» կոնցեպցիայի կարևորագույն կողմերից մեկը: Բացատրել, թե ինչ է նշանակում «գնահատել սեփական անձը» ինքնագնահատականի իմաստը – ուսանողների օգնությամբ, կիրառելով մտավոր գործի մեթոդը, քննարկել ինքնագնահատականի էությունը: Քննարկումը մասնավորապես իրականացվում է խմբավորման մեթոդի օգնությամբ: Առաջարկել ուսանողներին՝ ներկայացնել իրենց անձի ինքնագնահատականի հետ կապված անհատական նկարագիրը և փորձել պարզել, թե ինչպես է այն ձևավորվել և ինչպես է ազդում միջանձնային հարաբերությունների վրա:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 3 ժամ:
Ուսումնառության արդյունք 2 Կատարման չափանիշներ	Վերհանել իր մասնագիտական զարգացման կարիքները ա. ճիշտ է ներկայացնում անհրաժեշտ մասնագիտական կարողությունները, բ. ճիշտ է որոշում իր կարիքները մասնագիտական զարգացման տեսանկյունից, գ. ցուցադրում է իր մասնագիտական կարիքները բավարարելու համար տեղեկատվության, ուսումնառության աղբյուրներ կողմնորոշվելու, հայթայթելու և դրանցից օգտվելու օրինակներ:
Գնահատման միջոց	Առաջարկված կոնկրետ իրավիճակների վերլուծության հիման վրա աջակցությունների ցուցակի կազմում: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է գործնական աշխատանքը և ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում հարցերին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Առաջարկել ուսանողներին՝ ներկայացնել անձի ինքնագնահատականի հետ կապված անհատական նկարագիրը և փորձել պարզել, թե ինչպես է այն ձևավորվել և ինչպես է ազդում մասնագիտական զարգացման գործում: Համատեղ աշխատել մասնագիտական գրականության վրա, մշակելով այդ տիպի փաստաթղթերի հետ աշխատելու կարողություններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 3 ժամ:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության առանձնահատկությունները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կրթության և ուսումնառության ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունից ֆորմալ կրթության անցնելու ճանապարհները:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: 1. Նշեք երեք փաստ, որոնք ըստ Ձեզ բացասական են մասնագիտական կրթության համակարգում, և առաջարկեք վերանայման ուղիները: 2. Մեծահասակների ուսուցման դերը վերապատրաստման և վերաորակավորման գործընթացում, 3. Ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության դերը մասնագիտության ձեռքբերման գործում, Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է գործնական աշխատանքը և ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում հարցերին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Այս նյութի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մասնագիտական կրթության զարգացման միտումները: Քննարկել այն հարցը թե՞ ինչպես է իրականացվում մեծահասակների ուսուցումը և Եվրոպական հանձնաժողովի կողմից 2002թ. ընդունված՝ «Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության մասին հուշագիրը», որը սահմանում է նպատակաուղղված կրթական գործունեության երեք ուղղություն՝ ֆորմալ ուսուցում, ոչ ֆորմալ ուսուցում և «ինքնաբուխ» (կամ «ակամա», «ինֆորմալ») ուսուցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 3 ժամ Գործնական աշխատանք՝ 3 ժամ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՏԵՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՏՍԱԹՂԹԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՈԼԴ 4-09-018
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ դպրոցում մատենավարության, ուսումնական և վերլուծական փաստաթղթերի ստեղծման մասին:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական պարապմունք՝ 12 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ:

Մուտքային պահանջները	<i>Չկան</i>
Ուսումնառության արդյունքներ	<p><i>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</i></p> <ol style="list-style-type: none"> <i>1. կատարի գրանցում դասամատյանում՝ ըստ թեմատիկ պլանի և դասամատյանի վարման կանոնների,</i> <i>2. կազմի ամփոփաթեթ,</i> <i>3. կազմի անձնական գործեր [դասդեկ],</i> <i>4. կազմի աշակերտի բնութագիրը,</i> <i>5. Կազմի քննական արձանագրություն, զեկուցագիր, բնութագիր,</i> <i>6. կազմի և վարի աշակերտների անհատական թղթապանակ:</i>
Մոդուլի գնահատման կարգը	<i>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:</i>
Ուսումնառության արդյունք 1	<i>Կատարել գրանցում դասամատյանում՝ ըստ թեմատիկ պլանի և դասամատյանի վարման կանոնների:</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. դասամատյանում գրանցումները կատարում է ըստ թեմատիկ պլանի, բ. գրանցումները դասամատյանում կատարում է ըստ դասամատյանի վարման կանոնների:</i>
Գնահատման միջոց	<i>Չամենատեղ թեմատիկ պլանները և մատյանի յուրացումները: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է գործնական աշխատանքը և ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում հարցերին:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Դասախոսություն, անհատական և խմբային գործնական աշխատանք: Մասնագիտական գրականություն: Դասավանդողից կպահանջվի օգտագործել փաստաթղթերի տեսակները ցուցադրող թղթապանակ: Իսկ խմբային քննարկումներում կհստակեցնեն ստացած մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորությունները:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 1 ժամ:</i>
Ուսումնառության արդյունք 2	<i>Կազմել ամփոփաթեթ</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ է ներկայացնում ամփոփաթեթերի կառուցվածքները, բ. ճիշտ է կազմում ամփոփաթեթ՝ ըստ սահմանված նմուշի, գ. ամփոփաթեթի հիման վրա ճիշտ է կատարում վերլուծություններ:</i>
Գնահատման միջոց	<i>Ուսանողը կներկայացնի հակիրճ զեկույց, որի մեջ կարտահայտի նվաճումները, կհիմնավորի դրանք և կվերլուծի</i>

	<p>ամհաջողությունների պատճառները: Կներկայացնի նաև ուսումնառության տարբեր եղանակները: Այդ գրավոր խոսքը պետք է պարունակի 100 բառից ոչ ավելի:</p> <p>Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Դասախոսություն, անհատական և խմբային գործնական աշխատանք: Մասնագիտական գրականություն: Դասավանդողից կպահանջվի օգտագործել փաստաթղթերի տեսակները ցուցադրող թղթապանակ: Իսկ խմբային քննարկումներում կհստակեցնեն ստացած մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորությունները:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:</p>
Ուսումնառության արդյունք 3	Կազմել անձնական գործեր [դասդեկ]
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում անձնական գործերի տիպերը, բ. ճիշտ է կազմում անձնական գործ, գ. կարողանում է վարել անձնական գործեր:</p>
Գնահատման միջոց	Կառաջարկվի անձնական գործերի տարբեր նքուշներ և կառաջարկվի հակիրճ, գրավոր թվարկել հիմնական փաստաթղթերը և դրանց հաջորդականությունը: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Դասախոսություն, անհատական և խմբային գործնական աշխատանք: Մասնագիտական գրականություն: Դասավանդողից կպահանջվի օգտագործել փաստաթղթերի տեսակները ցուցադրող թղթապանակ: Իսկ խմբային քննարկումներում կհստակեցնեն ստացած մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորությունները:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:</p>
Ուսումնառության արդյունք 4	Կազմել աշակերտի բնութագիր
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշակերտի բնութագրի տիպերը, բ. ճիշտ է կազմում աշակերտի բնութագիր, գ. ներկայացված բնութագրերից ճիշտ հետևություններ է անում:</p>
Գնահատման միջոց	Ուսանողներին առաջարկել ԳՈՒՄ մեթոդով վերլուծել աշակերտի բնութագրին ներկայացվող պահանջներ, առաջարկել աշակերտի բնութագրի տարբեր տիպեր և կատարել գործնական աշխատանք` գրելով միմյանց բնութագիրը: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Դասախոսություն, գործնական աշխատանք, թեստավորում և անկետավորում, մասնագիտական գրականություն: Առաջարկել աշակերտի բնութագրի տարբեր տիպեր, վերլուծել բնութագրիքն ներկայացվող հիմնական պահանջները շեշտադրելով բնութագիր գրելու նպատակը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 5	Կազմել քննական արձանագրություն, զեկուցագիր
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում քննական արձանագրությունների տիպերը, բ. ճիշտ է կազմում քննական արձանագրություն, գ. ճիշտ է կազմում զեկուցագիր` ըստ առաջադրված խնդրի:
Գնահատման միջոց	Առաջարկված նյութի ուսումնասիրության հիման վրա ներկայացնել քննական արձանագրությունների տիպերը. Բաժնի յուրացումը գնահատելու համար սովորողի ընդունելի կիսմարվի յուրաքանչյուր ուսումնառության արդյունքների համար սահմանված կատարողականության չափանիշների ձեռք բերումը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Դասախոսություն, գործնական աշխատանք, թեստավորում և անկետավորում, մասնագիտական գրականություն: Աշխատանք փաստաթղթերի հետ: Խրախուսելի են գործնական աշխատանքների կատարումը` օգտագործելով ուսումնառության տարբեր ձևեր: Պետք է ապահովել տարբեր տեսակի արձանագրությունների թղթային և թվայնացված հիմքով մի շարք փաթեթներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:
Ուսումնառության արդյունք 6	Կազմել և վարել աշակերտների անհատական թղթապանակ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անհատական թղթապանակների տիպերը, բ. ճիշտ է կազմում անհատական թղթապանակ, գ. կարողանում է վարել անձնական թղթապանակներ:
Գնահատման միջոց	Թվարկել թղթապանակի տեսակները և դրանց ներկայացվող պահանջները: Ներկայացնել թղթապանակի առավելությունը: Բացատրել թղթապանակի հետ աշխատելու մեթոդները: Բաժնի յուրացումը գնահատելու համար սովորողի ընդունելի կատարողականություն կիսմարվի յուրաքանչյուր ուսումնառության արդյունքների համար սահմանված կատարողականության չափանիշների ձեռք բերումը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, տեսական ուսուցման ժամանակ ներկայացնել թղթապանակի բովանդակությանը ներկայացվող պահանջները, գործնականում ցուցադրել աշակերտական, ուսանողական, դասախոսական թղթապանակների տեսակներ, բացատրել նաև էլեկտրոնային թղթապանակի դերը և կիրառումը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 1 ժամ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՈԼԴ 4-09-019
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է մասնագետի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է էկոլոգիական գիտելիքների ուսուցման միջոցով ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ, դրա հիման վրա ձևավորել էկոլոգիական վարքագիծ, ինչը ուսանողը կօգտագործի իր հետագա մասնագիտական գործունեության մեջ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական պարապմունք` 18 ժամ Գործնական աշխատանք` 18 ժամ:
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001 «Գոգեբանություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է` 1. իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունները 2. իմանա էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները 3. իմանա էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը 4. դրսևորի էկոլոգիական վարքագիծ ամենօրյա գործունեության մեջ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ էկոլոգիական հիմնական հասկացությունները
Կատարման	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիան` որպես բնագիտական, սոցիալական գիտություն, և նրա կապը այլ գիտությունների հետ,

չափանիշներ	բ. ճիշտ է բացատրում անկենդան, կենդան և մարդածին գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա, գ. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները:
Գնահատման միջոց	Ուսանողին կտրվեն հարցեր էկոլոգիական հիմնական հասկացությունների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է սահմանում էկոլոգիան որպես գիտություն, գիտի նրա կապն այլ գիտությունների հետ, կարողանում է բացատրել էկոլոգիական տարբեր գործոնների փոխազդեցության մեխանիզմը, տարբերակում է էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր էկոլոգիական հիմնախնդրի էությունը, գ. ճիշտ է թվարկում 33 կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, ճիշտ է ներկայացնում 33 «Կարմիր գիրքը» և նրանց ընդհանուր բովանդակությունը, դ. ճիշտ է ներկայացնում անձի էկոլոգիական իրավունքներն ու պարտականությունները:
Գնահատման միջոց	Ուսանողին կտրվեն հարցեր Երկրագնդի հիմնական էկոլոգիական հիմնախնդիրների և դրանց ծնող պատճառների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է թվարկում ժամանակակից հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, 33 կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, գիտի «Կարմիր գիրքի» նշանակության ու անձի էկոլոգիական իրավունքների ու պարտականությունների մասին: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, մասնավորապես 33 «Կարմիր գիրքը», անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:
Ուսուցման	Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Երաշխավորված ժամաքանակ	Գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը, բ. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ, գ. ճիշտ է բացատրում էկոլոգիական դաստիարակության դերը մարդու առօրյա գործունեության մեջ:
Գնահատման միջոց	Ուսանողին կտրվեն հարցեր էկոլոգիական դաստիարակության նպատակի, բովանդակության ու նշանակության մասին: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, սահմանում է էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը, կարողանում է ընկալել էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ, կարևորում է էկոլոգիական դաստիարակության դերը մարդու ամենօրյա գործունեության մեջ: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Դրսևորել էկոլոգիական վարքագիծ իր ամենօրյա գործունեության մեջ
Կատարման չափանիշներ	ա. կողմնորոշվում է և ճիշտ լուծումներ է տալիս էկոլոգիական իրավիճակային խնդիրներին:
Գնահատման միջոց	Ուսանողին կհանձնարարվեն իրավիճակային խնդիրներ, որոնց նա պետք է տա համապատասխան լուծումներ: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է դերային խաղի կամ ուսուցման այլ ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը իրավիճակային խնդիրը ճիշտ է լուծում կամ տալիս է անհրաժեշտ հիմնավորում իր ենթադրյալ գործողությունների իրականացման համար:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ գրեմական պիտույքներ, պինդվանդ, ֆլիպչարթ, պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր: Դնարավորության

	դեպքում ուսումնական գործընթացի մի մասը ցանկալի է կազմակերպել լսարանից դուրս՝ բնության գրկում, արտադրական կազմակերպությունում, այլուր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՍՈՊՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ, ԴԻԳԻԵՆԱ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԻՍՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՈԼԴ 4-09-020
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ երեխաների օրգանիզմի աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին՝ երեխաների առողջության պահպանման, հնարավոր հիվանդությունները և առողջության խանգարումները ժամանակին նկատելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:
Մոդուլի տևողությունը	108 ժամ Տեսական պարապմունք՝ 64 ժամ Գործնական աշխատանք՝ 44 ժամ:
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝ 1. Իմանա երեխայի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները: 2. Իմանա երեխայի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները: 3. Իմանա երեխայի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: 4. Իմանա մանկական տարածված հիվանդությունները և դրանք ծնող պատճառները: 5. Իմանա երեխայի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանա կիրառել դրանք:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ դպրոցականի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները:
Կատարման	ա. ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի աճի առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները:

չափանիշներ	բ. ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի զարգացման առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները: գ. օգտվում է դպրոցականների ֆիզիկական զարգացման ցուցանիշների տեղեկատվական տիպօրինակներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխաների օրգանիզմի աճի և զարգացման մասին:
Գնահատման միջոց	Ուսանողին կտրվի երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակ, որի միջոցով նա պետք է ներկայացնի երեխայի օրգանիզմի աճի և զարգացման առանձնահատկությունները: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է գործնական աշխատանքի միջոցով՝ տիպօրինակի միջոցով ներկայացնելով սեփական աճի ու զարգացման առանձնահատկությունները : Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը օգտվելով երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակից կատարում է ճիշտ մեկնաբանություններ: Թույլատրվում են աննշան շեղումներ ճիշտ պատասխանից:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ երեխայի օրգանիզմի աճի և զարգացման մասին տեղեկատվական տիպօրինակ, ցուցապաստառներ, նկարներ, համապատասխան գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ դպրոցականի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները:
Կատարման չափանիշներ	ա. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում կմախքի, մկանների տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում հենաշարժիչ համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, բ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում սիրտ-անոթային համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, գ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում շնչառական համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, դ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում մարսողական համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում մարսողական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, ե. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում միզազատական համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում միզազատական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, զ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում ներզատիչ գեղձերի տեղը և ճիշտ է ներկայացնում նրանց կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, է. ուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում աղջիկների և տղաների սեռական օրգանների տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում սեռական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, թ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում նյարդային համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, ժ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում վերլուծիչների տեղն ու կառուցվածքը,

	<i>ժա. մուլյաժի կամ ցուցապատառի վրա ճիշտ է ցուցադրում մաշկի կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում մաշկի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները:</i>
Գնահատման միջոց	<i>Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների և կհանձնարարվի մուլյաժի կամ ցուցապատառի վրա ցույց տալ կատարման չափանիշներով սահմանված օրգանների և դրանց համակարգերի տեղն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է ցույց տալիս տվյալ օրգանի տեղ ցուցապատառի կամ մուլյաժի վրա և ճիշտ է բացատրում դրա կառուցվածքային առանձնահատկությունները:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ երեխայի ներքին օրգանների մուլյաժ, ցուցապատառներ, համապատասխան գրականություն: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել երեխայի ներքին օրգանների էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք` 20 ժամ Գործնական աշխատանք` 16 ժամ</i>
Ուսումնառության արդյունք 3	<i>Իմանալ դպրոցականի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ է ներկայացնում կմախքի և մկանների ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում մարսողական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում միզազատական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, զ. ճիշտ է ներկայացնում ներզատիչ գեղձերի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, է. ճիշտ է ներկայացնում աղջիկների և տղաների սեռական օրգանների սեռական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, ը. ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, թ. ճիշտ է ներկայացնում վերլուծիչների ֆիզիոլոգիան, ժ. ճիշտ է ներկայացնում մաշկի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, ժա. ճիշտ է բացատրում նյութերի և էներգիայի փոխանակության տարիքային առանձնահատկությունները, ժբ. ճիշտ է բացատրում բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմը երեխաների մոտ:</i>
Գնահատման միջոց	<i>Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 80%-ին:</i>

Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապատառներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել երեխայի օրգանների ֆիզիոլոգիային վերաբերող էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 20 ժամ Գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ մանկական տարածված հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է թվարկում մանկական տարածված հիվանդությունների անվանումները և ճիշտ է ներկայացնում այդ հիվանդությունների հիմնական ախտանիշները, բ. Ճիշտ է ներկայացնում հիվանդությունների առաջացման, տարածման և կանխման ընդհանուր մեխանիզմը:
Գնահատման միջոց	Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների և կհանձնարարվի կատարել գործնական աշխատանք: Նրան կտրվեն մանկական տարածված հիվանդությունների հիմնական ախտանիշները, որոնց միջոցով ուսանողը պետք է անվանի այդ հիվանդությունը: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին և լիարժեք գիտի մանկական տարածված հիվանդություններն ըստ նրանց ախտանիշների:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապատառներ, նկարներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ, համակարգչային տեխնիկա: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել հիվանդությունների ախտանիշներին, դրանց կանխարգելմանը նպատակաուղված միջոցառումներին վերաբերող տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք՝ 6 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ դպրոցականի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանալ կիրառել դրանք:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է բացատրում հիգիենայի՝ որպես առողջության պահպանման և ամրապնդման գիտության նպատակը, բ. Ճիշտ է ներկայացնում դպրոցականի առողջությունը ամրապնդող և թուլացնող գործոնները, գ. Ճիշտ է ներկայացնում հենաշարժիչ համակարգի դեֆորմացիայի պատճառները և ճիշտ է ցուցադրում կեցվածքի պահպանման ձևերը, դ. Ճիշտ է ներկայացնում հիգիենիկ ռեժիմի կազմակերպումը վարակիչ հիվանդությունների ժամանակ, ե. Ճիշտ է ներկայացնում սննդամթերքի և սննդի ռեժիմի նկատմամբ հիգիենիկ պահանջները, զ. Ճիշտ է կիրառում աշխատանքի և հանգստի հերթազայումը ուսուցման գործընթացում,

	<p>է. ճիշտ է հաշվում դպրոցականի պուլսը, շնչառության հաճախականությունը, ը. արյան ճնշումը չափելու գործիքով ճիշտ է չափում դպրոցականի արյան ճնշումը, թ. ճիշտ է ներկայացնում դպրոցականի հագուստին և կոշիկին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ժ. ճիշտ է ներկայացնում մաշկի, մազերի և եղունգների խնամքի հիգիենայի կանոնները, ժա. ճիշտ է ներկայացնում ուսումնական հաստատությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները:</p>
Գնահատման միջոց	<p>Ուսանողին կտրվեն հարցեր ըստ կատարման չափանիշների 1, 2, 4, 5, 9, 10, 11 կետերի և կհանձնարարվեն գործնական աշխատանքներ ըստ կատարման չափանիշների 3, 6, 7, 8 կետերի: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, հարցուպատասխանի, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր ու գրավոր հարցերի առնվազն 90%-ին, ճիշտ է ցույց տալիս կեցվածքի պահպանման ծները, ճիշտ է կազմում աշխատանքի և հանգստի հերթագայման պլանը, ճիշտ է հաշվում պուլսը, շնչառության հաճախականությունը, ճիշտ է շահագործում արյան ճնշումը չափելու գործիքը և ճիշտ է չափում արյան ճնշումը:</p>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<p>Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցապաստառներ, համապատասխան գրականություն, մուլյաժներ, վարկյանաչափ, արյան ճնշումը չափելու գործիք: Հնարավորության դեպքում կարելի է օգտագործել էլեկտրոնային լուսանկարներ կամ պատկերներ, ցուցադրել տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<p>Տեսական պարապմունք՝ 14 ժամ Գործնական աշխատանք՝ 12 ժամ:</p>
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՌՈՒՄԱՅ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՍՆ ՄԵԹՈՂԻԿԱ»	
Սողուլի դասիչը	ՈԼԴ 4-09-021
Սողուլի նպատակը	<p>Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է՝ սովորողի մոտ ձևավորել հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման հմտություններ ու կարողություններ, ինչպես նաև հաղորդել գիտելիքներ ռուսաց լեզվի դասավանդման տեսական և գործնական հիմունքների վերաբերյալ, այն է՝ ուսուցման նպատակները, բովանդակությունը, արդյունավետ մեթոդներն ու սկզբունքները, ինչպես նաև խոսքային գործունեության տեսակների կարողությունների ու հմտությունների զարգացման ուղիները, լեզվական նյութի յուրացման եղանակները, ուսուցման տեխնիկական միջոցների կիրառման հնարավորությունները: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը տեղյակ կլինի միջնակարգ դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման արդյունավետ մեթոդներին ու սկզբունքներին, ուսուցման միջոցներին, կտիրապետի լեզվական միջոցների, ինչպես նաև խոսքային գործունեության տեսակների ուսուցման եղանակներին, կկարողանա արդյունավետ կազմակերպել Ռուսաց լեզվի դասավանդման գործընթացը:</p>

Մոդուլի տևողությունը	62 ժամ Տեսական պարապմունք՝ 22 ժամ Գործնական աշխատանք՝ 40 ժամ:
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՌԼԴ 4-09-001 «Դոզերանություն» և ՌԼԴ 4-09-002 «Սանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՌԼԴ 4-09-006 «Ուսուցման գործընթաց», ՌԼԴ 4-09-007 «Դրդապատճառային տեխնիկայի կիրառում», ՌԼԴ 4-09-008 «Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում», ՌԼԴ 4-09-009 «Չամագործակցային ուսումնառություն» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝ 1. Իմանա «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա» առարկայի տեսական հիմունքները 2. Իմանա լեզվական միջոցների ուսուցման հնարները 3. Իմանա խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցման եղանակներն ու մեթոդները 4. Իմանա ռուսաց լեզվի ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները 5. Կիրառի ժամանակակից ինտերակտիվ մեթոդներ 6. Կիրառի սոցիալ-մշակութային գործոնը դասավանդման ընթացքում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա» առարկայի տեսական հիմունքները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունները, բ. ճիշտ է շարադրում ռուսաց լեզվի ուսուցման նպատակները (գործնական, կրթական, դաստիարակչական), գ. ճիշտ է ներկայացնում ռուսաց լեզվի ուսուցման բովանդակության տարրերը, դ. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման հիմնարար սկզբունքներն ու մեթոդները, ե. ճիշտ է քվարկում ռուսաց լեզվի ուսուցման միջոցները, տեղեկատվության հիմնական աղբյուրները:
Գնահատման միջոց	Արդյունքը իրականացվելու է թեստի, գործնական աշխատանքի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90 %-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորված են տեսական գիտելիքներ «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա» առարկայից:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Դասավանդման համար անհրաժեշտ են դասագրքեր, մասնագիտական գրականություն, համակարգիչ, գծապատկերներ, աղյուսակներ:
Ուսուցման երաշխավորված	Տեսական պարապմունք՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ:

ժամաքանակ	
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ լեզվական միջոցների ուսուցման հնարները
Կատարման չափանիշներ	<p>Բառապաշարի ուսուցում.</p> <p>ա. ճիշտ է սահմանում հանրակրթական դպրոցում բառապաշարի ուսուցման նպատակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում անհրաժեշտ բառապաշարի ընտրության սկզբունքները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում բառիմաստի բացահայտման եղանակները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում բառային վարժությունների տիպերը (ռեցեպտիվ, ռեպրոդուկտիվ, խոսքային):</p> <p>քերականության ուսուցում.</p> <p>ա. ճիշտ է սահմանում քերականության տեղն ու դերը հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում քերականական նյութի ընտրության սկզբունքները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում քերականական նյութի բացատրության ուղիներն ու եղանակները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում քերականական վարժությունների տիպերը (ռեցեպտիվ, ռեպրոդուկտիվ):</p> <p>հնչյունաբանության ուսուցում.</p> <p>ա. ճիշտ է սահմանում հանրակրթական դպրոցում հնչյունաբանության ուսուցման բովանդակությունը, խնդիրներն ու սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հնչյունաբանական նյութը բացատրելու եղանակները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հնչյունաբանական վարժությունների տեսակները (ընկալողական, վերարտադրողական):</p>
Գնահատման միջոց	Արդյունքը իրականացվելու է թեստի, գործնական աշխատանքի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90 %-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորված են լեզվական միջոցների ուսուցման հնարները:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Դասավանդման համար անհրաժեշտ են դասագրքեր, մասնագիտական գրականություն, համակարգիչ, գծապատկերներ, աղյուսակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 4 ժամ Գործնական աշխատանք` 8 ժամ:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցման եղանակներն ու մեթոդները:
Կատարման չափանիշներ	<p>Բանավոր խոսքի ուսուցում.</p> <p>ա. ճիշտ է սահմանում հանրակրթական դպրոցում բանավոր խոսքի ուսուցման դերը ռուսաց լեզվի դասավանդման գործում,</p> <p>բ. ճիշտ է սահմանում բանավոր խոսքին ներկայացվող պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մեծախոսության և երկխոսության ուսուցման համար անհրաժեշտ վարժությունների տեսակները: ունկնդրում.</p>

	<p>ա. ճիշտ է սահմանում հանրակրթական դպրոցում ունկնդրման դերը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում, բ. արդյունավետ լուծումներ է տալիս ունկնդրելիս առաջացող լեզվական դժվարություններին (ինչյունաբանական, բառական, քերականական, կառուցվածքային), գ. ճիշտ է սահմանում ունկնդրմանը ներկայացվող պահանջները, դ. ճիշտ է ներկայացնում ունկնդրման կարողությունների զարգացմանը միտված վարժությունների տիպերը (լեզվական, խոսքային): ընթերցանության ուսուցում. ա. ճիշտ է սահմանում ընթերցանության էությունը, առանձնահատկությունները և հանրակրթական դպրոցում դրա ուսուցման հիմնական սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում ընթերցանության հիմնական տեսակները, գ. ճիշտ է սահմանում ընթերցանությանը ներկայացվող պահանջները, դ. ճիշտ է ներկայացնում ընթերցանության ուսուցման մեթոդները, ե. ճիշտ է ներկայացնում ընթերցածը հասկանալու ստուգման եղանակները: զրավոր խոսքի ուսուցում. ա. ճիշտ է սահմանում հանրակրթական դպրոցում զրավոր խոսքի ուսուցման դերը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում, բ. ճիշտ է ներկայացնում զրելու ուսուցման տեխնիկան, գ. ճիշտ է ներկայացնում զրելու կարողությունների զարգացմանը միտված վարժությունների տեսակները:</p>
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքը իրականացվելու է թեստի, գործնական աշխատանքի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90 %-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորված են խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցման եղանակներն ու մեթոդները:</p>
<p>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</p>	<p>Տեսական և գործնական ուսուցում: Դասավանդման համար անհրաժեշտ են դասագրքեր, մասնագիտական գրականություն, համակարգիչ, գծապատկերներ, աղյուսակներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</p>	<p>Տեսական պարապմունք` 4 ժամ Գործնական աշխատանք` 8 ժամ:</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Իմանալ ռուսաց լեզվի ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի ուսուցման աստիճանները (սկզբնական, միջին, բարձր), բ. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի ուսուցման գործընթացի իրականացման եղանակները ուսուցման բոլոր աստիճաններում, գ. ճիշտ է ներկայացնում ռուսաց լեզվի դասը պլանավորելու, վարելու և վերլուծելու եղանակները, դ. ճիշտ է ներկայացնում ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում աշակերտների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ստուգման եղանակները, ե. ճիշտ է կատարում աշակերտների հաջողությունների ոչ նյութական գնահատում (պարգևատրության համակարգ),</p>

	<i>զ. ճիշտ է սահմանում ազգային դպրոցում ռուսաց լեզվի ուսուցման առանձնահատկությունները:</i>
Գնահատման միջոց	<i>Արդյունքը իրականացվելու է թեստի, գործնական աշխատանքի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90 %-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված, ինչպես նաև ուսանողը գիտի ռուսաց լեզվի ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Տեսական և գործնական ուսուցում: Դասավանդման համար անհրաժեշտ են դասագրքեր, մասնագիտական գրականություն, համակարգիչ, գծապատկերներ, աղյուսակներ:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք` 4 ժամ Գործնական աշխատանք` 8 ժամ:</i>
Ուսումնառության արդյունք 5	<i>Կիրառել ժամանակակից ինտերակտիվ մեթոդներ</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ է ներկայացնում ժամանակակից ինտերակտիվ մեթոդների էությունը, բ. ճիշտ է կիրառում ինտերակտիվ մեթոդները աշակերտների սովորելու մոտիվացումը խթանելու նպատակով, գ. ճիշտ է հաշվի առնում սովորողների տարբեր տիպերը` տարբեր մեթոդներ կիրառելու միջոցով, դ. ճիշտ է կիրառում աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքները, ե. ճիշտ է կիրառում լսարանում լեզվի ուսուցման հաղորդակցական սկզբունքը, զ. ճիշտ է ներկայացնում ուսուցչի և աշակերտի դերի փոփոխությունը ինտերակտիվ մեթոդների ներմուծման ընթացքում:</i>
Գնահատման միջոց	<i>Արդյունքը իրականացվելու է թեստի, գործնական աշխատանքի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90 %-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված, ինչպես նաև ուսանողը գիտի և ճիշտ է կիրառում ժամանակակից ինտերակտիվ մեթոդներ:</i>
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	<i>Տեսական և գործնական ուսուցում: Դասավանդման համար անհրաժեշտ են դասագրքեր, մասնագիտական գրականություն, համակարգիչ, գծապատկերներ, աղյուսակներ:</i>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	<i>Տեսական պարապմունք` 6 ժամ Գործնական աշխատանք` 8 ժամ:</i>
Ուսումնառության արդյունք 6	<i>Կիրառել սոցիալ-մշակութային գործոնը դասավանդման ընթացքում:</i>
Կատարման չափանիշներ	<i>ա. ճիշտ միջոցներ է կիրառում ռուսական մշակույթի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու համար, բ. ճիշտ է կիրառում ազգային և համաշխարհային մշակութային արժեքների համադրման գործոնը:</i>

Գնահատման միջոց	Արդյունքը իրականացվելու է թեստի, գործնական աշխատանքի, հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ծիշտ է լրացված նվազագույնը 90 %-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ծիշտ են տրված, ինչպես նաև ուսանողը մոտ ձևավորվել են դասավանդման ընթացքում սոցիալ-մշակութային գործոնը կիրառելու կարողություններ:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Տեսական և գործնական ուսուցում: Դասավանդման համար անհրաժեշտ են դասագրքեր, մասնագիտական գրականություն, համակարգիչ, գծապատկերներ, աղյուսակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք` 2 ժամ Գործնական աշխատանք` 4 ժամ:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»	
Սողուլի դասիչը	ՈԼԴ 4-09-022
Սողուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Սողուլի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ թ Ռուսաստանի աշխարհագրության, պատմության, հասարակական և մշակութային առանձնահատկությունների, սովորույթների, ավանդույթների և կենցաղի մասին, հաղորդվող տեղեկատվությանը զուգահեռ սովորողի մոտ ձևավորել համեմատելու, վերլուծելու, ներկայացնելու կարողություններ: Ավարտելով մոդուլը` ուսանողը կկարողանա ժուսերեն լեզվով ներկայացնել տվյալ երկրի յուրահատկությունները, առօրյան, նաև պետական կառուցվածքը, քաղաքական համակարգը, պետական կրոնները, մշակութային կյանքը և արժեքները:
Սողուլի տևողությունը	72 ժամ Տեսական պարապմունք` 48 ժամ Գործնական աշխատանք` 24 ժամ:
Սուտքային պահանջները	Չկան
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է` 1. ներկայացնի ուսումնասիրվող օտար լեզվի երկրների պատմական առանցքները, լեզուն և նրա զարգացման փուլերը` համեմատելով իր երկրի հետ. 2. նշի և ներկայացնի ուսումնասիրվող օտար լեզվի երկրի աշխարհագրական դիրքը, վարչական բաժանումը և բնակչության ժողովրդագրական ցուցանիշները` համեմատելով իր երկրի հետ 3. ներկայացնի ուսումնասիրվող օտար լեզվի երկրի կրթական համակարգը` համեմատելով իր երկրի հետ. 4. ներկայացնի ուսումնասիրվող օտար լեզվի երկրի պետական կառուցվածքը` համեմատելով իր երկրի հետ

	<p>5. նշի և ներկայացնի ուսումնասիրվող օտար լեզվի երկրի մշակութային արժեքները, հիմնական տեսարժան վայրերը, խոշոր քաղաքները՝ համեմատելով իր երկրի հետ</p> <p>6. նշի և ներկայացնի ուսումնասիրվող օտար լեզվի երկրի ազգային տոները, ծեսերը, ավանդույթները՝ համեմատելով իր երկրի հետ:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ռեսուլտառության արդյունք 1	Իմանալ ուսումնասիրվող օտար լեզվի երկրի պատմական առանցքները, լեզուն և զարգացման փուլերը:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացում տվյալ երկրի մասին առաջին հիշատակումները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացում կարևոր պատմական իրադարձությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տվյալ երկրի լեզուն, նրա զարգացումը և գրավոր խոսքի ստեղծման առաջին հիշատակումները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում երկրի պետական խորհրդանիշները,</p> <p>ե. ճիշտ է համեմատում Հայաստանի և տվյալ երկրի վերոնշյալ բնութագրիչները:</p>
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցումների միջոցով, որոնց ընթացքում տրվում են հարցեր տվյալ երկրի կարևոր պատմական իրադարձությունների, նրա լեզվի, զարգացման և գրավոր խոսքի ստեղծման, նրա պետական խորհրդանիշների մասին: Հարցման վերջին հարցը պահանջում է համապատասխան համեմատություն իրականացնել իր երկրի հետ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե սովորողը գիտի անհրաժեշտ նյութը, կարողանում է կատարել համապատասխան համեմատություններ:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ձեռնարկ, ինչպես նաև օգտվել պատմական գրականությունից:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ռեսուլտառության արդյունք 2	Իմանալ Ռուսաստանի աշխարհագրական դիրքը, վարչական բաժանումը և ժողովրդագրական ցուցանիշները:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացում Ռուսաստանի աշխարհագրական դիրքը (բաղկացուցիչ և հարևան երկրները), վարչական բաժանումը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացում Ռուսաստանի աշխարհագրական դիրքի ազդեցությունը երկրի տնտեսության վրա,</p> <p>գ. ճիշտ է ներկայացում Ռուսաստանի բնակչիմայական պայմանները (գետերը, լեռները), բուսական աշխարհը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացում Ռուսաստանի բնակչության կազմը, կենսամակարդակը, խտությունը, էթնո-լեզվական առանձնահատկությունները,</p> <p>ե. ճիշտ է համեմատում Հայաստանի և Ռուսաստանի վերոնշյալ բնութագրիչները:</p>
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցումների միջոցով՝ համապատասխան աշխարհագրական քարտեզների

	պարտադիր օգտագործմամբ՝ համեմատական գույքահեռներ անցկացնելով իր երկրի հետ: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է օգտագործել համապատասխան գրականություն: Անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր, քարտեզ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ Ռուսաստանի կրթական համակարգը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացում Ռուսաստանի կրթական համակարգը, դրա առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացում Ռուսաստանի միջնակարգ կրթական համակարգը, գ. ճիշտ է ներկայացում Ռուսաստանի մասնագիտական կրթության և ուսուցման համակարգը, դ. իշտ է ներկայացնում հայտնի համալսարանները, ե. իշտ է ներկայացում մասնավոր կրթական համակարգի առանձնահատկությունները, զ. ճիշտ է ներկայացում Հայաստանի և Ռուսաստանի կրթական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը ստուգվում է բանավոր հարցման միջոցով, որի ժամանակ ամեն սովորողին տրվում է 3-ական հարց, որոնցից յուրաքանչյուրի ավարտական պարտադիր բաղադրիչն է համեմատությունը իր երկրի հետ: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնական գրականություն: Ուսուցման ընթացքում բերվում են իրական, գործող կրթական համակարգի առանձնահատկությունների օրինակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ Ռուսաստանի պետական կառուցվածքը
